DOI: 10.57192/18291864–2023.3–32

Վարդան Ա. Ալեքսանյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԱՆԱՆԻԱ ՄՈԿԱՑՈՒ ՕՐՈՔ (943–965)*

Բանալի բառեր – Անանիա Մոկացի, Աբաս Բագրատունի, Աշոտ Գ Ողորմած, Հակոբ Սյունեցի, Սյունիք, Աղվանք, հոգևոր անվտանգություն, անջատողականություն, քաղկեդոնականություն, կաթողիկոսական աթոռի տեղափոխություն, վանքերի թվի աճ, եկեղեցաքաղաքական պայքար:

Մուտք

Աբաս Բագրատունու (929–953) գահակալության երկրորդ շրջանում՝ 943 թվականից հետո, Բագրատունիները հետզհետե զորեղանում են՝ ձեռնամուխ լինելով Անիի կենտրոնական թագավորությանը հայկական իշխանությունների միավորմանը, որում առանցքային դեր էր վերապահված հայոց եկեղեցուն:

Շուրջ երկու տասնամյակ (925–947) Վասպուրականում գտնվելուց հետո հայրապետական աթոռը վերահաստատվում է Բագրատունիների տիրույթներում: Վասպուրականի արքա Գագիկ Արծրունու (908–943) մահից հետո Աբաս Բագրատունին, օգտվելով ստեղծված նպաստավոր իրավիճակից, կաթողիկոսարանը Աղթամարից տեղափոխում է Շիրակի Արգինա գյուղաքաղաք: Եկեղեցաքաղաքական այս

* Հոդվածն ընդունվել է տպագրության 25.08.2023:

կարևոր իրադարձությունը, որը մեծապես բարձրացրեց Աբաս արքայի հեղինակությունը, տեղի ունեցավ 10-րդ դարի նշանավոր կաթողիկոս Անանիա Ա Մոկացու ջանքերով: Վերջինս 10-րդ դարի կեսերին բյուզանդական եկեղեցու՝ Հայաստանում ծավալած քաղկեդոնական ակտիվ քարոզչության դեմ պայքարի առաջամարտիկ Նարեկյան դպրոցի ներկայացուցիչ էր: Քրիստոնեական սիրո գաղափարներով վարագուրված դավանական ճնշումը Բյուզանդիայի արևելյան քաղաքականության շարժիչներից էր: Ջուգակցելով փափուկ ուժի և կոշտ զինական միջամտության մարտավարությունները՝ կայսրությունը մտադիր էր ամբողջությամբ կլանել Հայաստանը: Բյուզանդիայի կողմից Մեծ Հայքի արևմտյան տարածքների (Տայք, Բարձր Հայք) նվաճումով 10-րդ դարի կեսերին սաստկանում են հալածանքները միաբնակ հայերի նկատմամբ: Այդ պատճառով մեծ թվով հակաքաղկեդոնական վանականներ հաստատվում են երկրի արևելյան շրջաններում և հիմնում բազմաթիվ վանքեր[1]:

Քաղկեդոնականության տարածումը նպաստավոր հող էր ստեղծում կենտրոնախույս ձգտումներ ունեցող իշխանական տների նկրտումների իրականացման համար: Անանիա Մոկացու կաթողիկոսության տարիներին նման կեցվածք են որդեգրում Հայոց արևելից կողմանց և Սյունիքի նախարարությունները, որոնց նվիրապետական աթոռները Քաղկեդոնի դրոշի ներքո գործում էին հայոց կաթողիկոսության միավորիչ ջանքերի դեմ: Հոգևոր-եկեղեցական պայքարի ոլորտում մյուս մարտահրավերը Թոնդրակյան շարժումն էր, որի անդամները հրաժարվում էին հայ եկեղեցու ծիսակատարություններից ու արարողություններից և մերժում էին եկեղեցական նվիրապետությունը: Հայաստանի տարբեր գավառներում նրանք ստեղծել էին սեփական կրոնական ըմբռնումներով և ուրույն բարոյական չափանիշներով կենցաղավարող աղանդավորական համայնքներ:

Այսպիսի իրադրությունը հղի էր ազգային-եկեղեցական կառույցների քայքայման վտանգով, որը չեզոքացնելու համար հայոց եկեղեցու առաջնորդից պահանջվում էր վարել խոհեմ և վճռական քաղաքականություն: Հայոց կաթողիկոսի միավորիչ առաքելությունն արդ-

1 Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, Ի Սուրբ Ղազար, 1862, էջ 88 (այսուհետ՝ **Վարդան վարդապետ**): Հմմտ. **Չամչյան Մ.**, Հայոց պատմություն, հատ. Բ, Եր., ԵՊՀ հրատ., 1984, էջ 823:

յունավետորեն իրականացնելու, դավանական ճնշումների դեմ թիրախային պայքար կազմակերպելու և, ի վերջո, ձեռքը երկրի «քաղաքական զարկերակի» վրա պահելու մտադրությամբ Անանիա Մոկացին հայրապետական աթոռը Վասպուրականից տեղափոխում է Այրարատ: «Կաթողիկոսական աթոռն ամուր պատվանդան էր գտնում հայկական ապահով հողի վրա, Անիի կողքին: Այս մերձավորության վրա հենված, հայ հոգևորականությունը հարձակողական քաղաքականություն սկսեց ազգային եկեղեցու հակառակորդների դեմ»[2],- եզրակացնում է Լեոն: Նպատակասլաց գործողություններով հայոց պատրիարքը **ճնշում է Աղվանից կաթողիկոսության և Սյունիքի մետրոպոլիտության անջատողականությունը** և անհաշտ պայքար ծավալում աղանդավորության դեմ:

Հայ պատմագրությունն իրավացիորեն բարձր է գնահատել Անանիա Մոկացու ձեռնարկած քայլերն աղանդավորության դեմ պայքարում: Սակայն անհրաժեշտություն է զգացվում գնահատելու և արժևորելու նրա դերը հայոց հոգևոր ու ազգային միասնության հաստատման և նվիրապետական կարգի վերականգնման գործում: Ստուգապատում աղբյուրների վրա հիմնված փաստարկման եղանակով և պատմաքննական մեթոդի կիրառմամբ փորձենք լուսաբանել Անանիա Մոկացու հոգևոր-քաղաքական գործունեության տարբեր փուլերը:

1. Նվիրապետական միասնության խարխլումը

Անանիա Մոկացին (943-965)[3] գահ բարձրացավ հայոց կաթողիկոսության համար անկումային ժամանակաշրջանում, երբ ազգային-

---

2 **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. Բ, Եր., «Հայաստան» հրատ., 1967, էջ 580:

3 Անանիա Մոկացու մասին տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն Տիեզերական, «Մատենագիրք հայոց», հատ. ԺԵ. Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 750 (այսուհետ՝ **Ասողիկ**): Ասողիկը հայտնում է, որ Անանիա Մոկացին աթոռակալել է ԻԲ (22) տարի (տե՛ս նույն տեղում, էջ 749): XII դ. ժամանակագիր Սամուել Անեցու հաղորդմամբ՝ Անանիա Մոկացին իր աթոռակալության 22 տարուց հինգն անցկացրել է Աղթամարում, իսկ «ԺԷ (17) ամ ի Վարագ եկաց» (**Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ՝ Կ. Մաթևոսյանի, Եր., «Նաիրի» հրատ., 2014, էջ 173 (այսուհետ՝ **Սամուէլ Անեցի**)): Ա. Եղիազարյանը կարծում է, որ Անանիա Մոկացու աթոռակալությանը վերագրվող 22 տարին (945-966) վերաբերում է Արգինայում գահակալությանը, իսկ 941-945 թթ. նրա նստավայրը եղել է Աղթամարը (տե՛ս **Եղիազարյան Ա.**, IX դ. վերջի, X դ. առաջին կեսի ամենայն հայոց կաթողիկոսների աթոռակալության

եկեղեցական կառույցների գլխին «դամոկլյան սրի» պես կախված էր տրոհման և քայքայման իրական վտանգը: Նրա գահահաջորդման օրերին հայոց եկեղեցին դիմակայում էր ծանր մարտահրավերների, որոնք սպառնում էին նվիրապետական կառույցի միասնությանը և հանրային համերաշխությանը: Ապականված էին հասարակության մեջ գործող բարքերը, նահանգային որոշ աթոռներ դրսևորում էին բացահայտ անհնազանդ և ըմբոստ վարքագիծ, քաղկեդոնական հայացքները մուտք էին գործել հայ ընտանիքներ, ավազակներն անպատիժ թիրախավորում էին մարդկանց՝ չխուսափելով անգամ արյունահեղությունից: Առավել վտանգավոր էր Աղվանից կաթողիկոսի դիրքորոշումը, որը հրաժարվում էր հայոց եկեղեցու ավանդությունից և բացահայտ մերժում էր նրա հոգևոր պետի գահերեցությունը: Ընդլայնելով համախոհների շրջանակը՝ Աղվանից եպիսկոպոսապետը կրոնադավանաբանական նորամուծություններ էր անում, որոնք միտված էին հայոց եկեղեցուց տարանջատմանը: Նման պայմաններում Անանիան խոստովանում էր, որ ոչ սովորական զգացումներով էր ստանձնում հոգևոր առաջնորդի պատասխանատվությունը, քանի որ «նկատեալ զիրի իրի նշկահումն, որ եղեալ էր յեկեղեցիս Աստուծոյ, գտի զոմանս եպիսկոպոսաց ապստամբեալս, և զոմանս յիշխանաց գաւառապետաց և զայլ խառնիճաղանճ ամբոխս քրիստոնէից ի խառն ամուսնութիւն քաղկեդոնականց: Քանզի ոչ գոյր յարկ զուգաւորաց, ուր ոչ էր միւսն Հայ եւ միւսն Վրացի, ըստ նմին եւ զաւակք տանն յերկմէջս փեղկեալ, եւ ի բազմակուտակ չարեաց բազմութեանն Ցամաքեալ սէր բազմաց, նաեւ՝ թշնամիք առն ընտանիք իւր: Թողից ասել եւ զմեկնազէն աւազակաց զանբաւ արիւնահեղութիւնս եւ զայլ դժնդակագործութիւնս, որք անխլուապէս խցեալ զականջս ի մասնէ բարւոյն»[4]:

Հայոց արևելից կողմանց եկեղեցու անջատողական կեցվածքը նվիրապետական միասնությանն ուղղված սպառնալիք էր, որի արմատները բավականին խորն էին: Անանիա Մոկացուց դեռևս երկուսուկես դար առաջ հայոց կաթողիկոս Եղիա Արծիշեցին (703–717),

---

ժամանակագրության շուրջ, «Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու», Եր., ԵՊՀ հրատ., 2020, N 3, էջ 163–166, 177):

4 «Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ ի ցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն», «Մատենագիրք հայոց», հատ. Ժ. Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 256 (այսուհետ՝ **Անանիա Մոկացի**, թուղթ Ա):

գործադրելով անհրաժեշտ միջոցներ, վճռականորեն կասեցրել էր Աղվանից աթոռի՝ հայրապետական առանցքից դեպի քաղկեդոնականություն շեղվելու փորձերը: Նա ճնշել էր ինքնընծա կաթողիկոս Ներսես Բակուրի քաղկեդոնական հակումները և Աղվանքի աթոռը պահել հայոց նվիրապետության կազմում: Այս կտրուկ ձեռնարկների շնորհիվ իրավիճակը խաղաղվել էր, և Եղիա Արճիշեցուն հաջորդած 14 կաթողիկոսների օրոք՝ մինչև Գևորգ Գառնեցու ժամանակները (877–897), Աղվանից աթոռը դավանաբանական խնդիրներ չէր հարուցել և հրաժարվել էր ինքնուրույնության հավակնություններից:

9-րդ դարի կեսերից կրկին թուլանում են կապերը հայոց կաթողիկոսության և ծայրամասային թեմերի միջև: Հայոց արևելից կողմանց և Սյունյաց աթոռները ձեռք են բերում որոշակի ինքնուրույնություն և որդեգրում ապակառուցողական ընթացք: 890-ական թվականներին Աֆշին ամիրայի ասպատակությունների հետևանքով Հայաստանում ստեղծված անկայուն իրավիճակը հյուսիսային շրջաններում անջատողականության պարարտ հող է ստեղծում: Այդ օրերին մահանում է Աղվանից Սամուել կաթողիկոսը (877–894), և քանի որ հայոց եկեղեցապետը՝ Գևորգ Գառնեցին, գերեվարված էր, տեղի եպիսկոպոսների ժողովը առանց կաթողիկոսական ձեռնադրության ոմն Հունանի ընտրում է «ինքեանց կաթողիկոս»[5]: Սրանով խախտվում է հնավանդ կարգը, ըստ որի՝ Աղվանից երկրի աշխարհիկ և հոգևոր ավագանու ընտրած առաջնորդական թեկնածուն պետք է ձեռնադրվեր հայոց քահանայապետի կողմից: Գերությունից վերադառնալուց հետո Գևորգ Գառնեցին իր փրկության գործում մեծ դեր խաղացած Աղվանից Համամ թագավորի խնդրանքով, հակառակ գործող եկեղեցական կարգի, Հունանին ձեռնադրում է երկրամասի կաթողիկոս: Սակայն Գևորգ Գառնեցու մահից հետո, երբ վախճանվում է նաև Հունանը, «սովորութիւն կալաւ եւ դիւրադարձ զեղեալսն. իբրեւ վաղճանէր Յունանն՝ ձեռնադրէին նոյն սովորութեամբ զհարազատ նորին զոմն Սիմէոն, և ի նմանէ՝ Դաւիթ, եւ ի նմանէ՝ Սահակ, եւ ի նմանէ՝ Գագիկն, առ որ այժմ բանս է. տեւեալ ապստամբութեամբ զամս .ԿԹ. (69) եւ զժամանակս հայրապետաց հնգից, մինչեւ ի մեր (Անանիա Մոկացի – Վ. Ա.) նուաստութիւնս»[6]: Այդ ընթացքում Աղվանից կաթողի-

5 Նույն տեղում, էջ 267:
6 Նույն տեղում:

կոսներն օծման համար այլևս չէին ներկայանում հայրապետական նստավայր, այլ տեղում ինքնագլուխ ձեռնադրություն էին կազմակերպում: Ցավով արձանագրելով նշյալ իրողությունները՝ Անանիա Մոկացին այդ ամենը բնորոշում է որպես **«ապստամբություն»**:

Անանիա Մոկացու օրոք Աղվանից կաթողիկոսության անջատողականության հերթական սրացումն ուներ ակնհայտ քաղկեդոնական աստառ, որը պարզ դարձավ Սահակ Բ (928–947) ու նրա հաջորդ Գագիկ Ա (947–958) կաթողիկոսների օրոք: Շրջանցելով եկեղեցու ավանդական կարգը՝ Աղվանից եպիսկոպոսապետը մերժում է հայոց նոր կաթողիկոսի ընտրության առիթով գումարված ազգային-եկեղեցական ժողովի հրավերը: Մոկացին հաղորդում է, որ Գագիկ Արծրունու խորհրդով եկեղեցական բարձրագույն ժողովին մասնակցելու հրավեր էր ուղարկվել Աղվանից կաթողիկոս Սահակին. «Եւ գրեալ առ նա (Սահակին – Վ. Ա.) յոյժ ողոքական եւ գեղեցիկ խորհրդով եւ եղբայրական պատուով բազմացուցեալ խոստմունս վասն կրկին միաբանութեան»[7], սակայն Սահակը հրաժարվել էր ներկայանալ: Երկրամասի հոգևոր պետի կողմից նման կարևոր իրադարձության անտեսումը եկեղեցադավանաբանական տարանջատման բացորոշ հայտ էր: Այստեղ կար մի էական հանգամանք. Աղվանից աթոռի անջատողական նկրտումները խրախուսվում էին երկրամասի իշխանների կողմից, որոնք ընդդիմանում էին Բագրատունիների կենտրոնացման քաղաքականությանը[8]:

Աղվանքի թագավոր Իշխանակը, որը նշանավոր բարեպաշտ արքա Համամի թոռն էր[9], «մոռացեալ զհարցն դաւանութիւն»[10], պաշտպանում էր քաղկեդոնական կողմնորոշումը: Այս խմորումներն այն աստիճանի են անհանգստացնում հայոց հայրապետության շուրջը համախմբված գործիչներին, որ Աղվանքի ավագանու ներկայացուցիչներին միաբանության և սիրո կոչ են հղում նաև ժամանակի նշանավոր «փիլիսոփայք եւ հմուտք ճարտասանութեան եւ հոգեկիր վարժապետք», որոնց գլխավորն էր «արդարեւ սուրբ եւ խաչակրաւն այրն Աստուծոյ Բասիլիոս, եւ արագախաւս եւ կորովամիտ Եղբայրիկն Հա-

7 Նույն տեղում, էջ 257:

8 Տե՛ս **Garsoyan N.**, The Armenian people from ancient to modern times, vol. I, 7, The Independent kingdoms of medieval Armenia, New-York, 1997, էջ 163:

9 Տե՛ս **Ադոնց Ն.**, Երկեր, հատ. Ա, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 511:

10 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 258:

մազասպեան, եւ միւս վարդապետն Գէորգ Կաղաթեցի կոչեցեալ, եւ Խոստրով գիտնական[11], եւ Գէորգ անպարտելին՝ Տարաւնացի կոչեցեալ»[12]: Սակայն նրանց կոչ-հորդորն արդյունք չի տալիս: Պետք է փաստել, որ Հայոց արևելից կողմերում ծավալվող անկախացման գործընթացները հետևանք էին հայ Բագրատունիների կենտրոնական իշխանության թուլացման, ինչը նախադրյալներ էր ստեղծում կենտրոնախույս շարժումների աշխուժացման համար:

Աղվանից կաթողիկոսության ինքնուրույնության ձգտումները, որոնք խրախուսվում էին արտաքին ու ներքին ուժերի նպատակաուղղված գործողություններով, արձագանք են գտնում նաև հարևան Սյունիքում: «Հիւսիսային Հայաստանի քաղկեդոնական եպիսկոպոսաց համար դաւանական նեցուկ մ'էր եղած Աղուանից աթոռը»[13],- գրում է Վ. Հացունին: Սերտ հարաբերություններ են հաստատվում Աղվանից և Սյունյաց առաջնորդների միջև, որոնք Հայաստանի հյուսիսային շրջաններում ձևավորում են հակակաթողիկոսական ընդդիմություն: Սյունյաց մետրոպոլիտն իր աթոռի եկեղեցավարչական խնդիրները լուծելու համար այլևս կաթողիկոսարան չէր ներկայանում, այլ դիմում էր Աղվանից եկեղեցու առաջնորդին: Այդ փոխհարաբերություններն ավելի սերտացան, երբ Սյունիքի մետրոպոլիտ դարձավ Հովհաննես Դրասխանակերտցու եղբորորդի Հակոբ Ա-ն (918-958)[14]: Վերջինս «հո-

11 Պ. Խաչատրյանը կարծում է, որ Խոստրով գիտնականը նույն ինքը՝ 10-րդ դարի նշանավոր մատենագիր Խոսրով Անձևացին է (տե՛ս **Խաչատրյան Պ.**, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք Ա, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 1996, էջ 37): Նույն կարծիքին է նաև Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը (տե՛ս **Գալստանյան Բ.**, Խոսրով եպիսկոպոս Անձևացի, Եր., «Արմավ» հրատ., 2022, էջ 21):

12 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 257:

13 **Հացունի Վ.**, Կարեւոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, Ս. Ղազար, 1927, էջ 482:

14 Հակոբը Դվինից էր, նախքան Սյունյաց մետրոպոլիտ ձեռնադրվելը Դվինի կաթողիկոսարանում ծառայում էր որպես սենեկապետ, կաթողիկոսի գործակալ և շարքային կրոնավորների ավագն էր: Ըստ Ստ. Օրբելյանի՝ բարձրահասակ և գեղեցիկ տղամարդ էր՝ «հանճարեղ եւ իմաստուն, քաղցրաբարոյ եւ հեզամիտ, լի ամենայն առաքինութեամբ» (**Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, տպարան Լազարեան ճեմարանի, 1861, էջ 184 (այսուհետ՝ **Օրբելյան Ստ.**)): Հակոբ եպիսկոպոսի օրոք աշխուժանում է Սյունյաց թեմի հոգևոր կյանքը, Սյունյաց եպիսկոպոսարանը դառնում է Հայաստանի ավատական խոշոր կազմակերպություններից մեկը: Ձեռք բերելով բազմաթիվ կալվածքներ և տիրանալով Տաթևի վանքի շրջակա գյուղերին՝ նա զարկ է տալիս տնտեսական կյանքի զարգացմանը: Նրա օրոք նոր թափ է ստանում եկեղեցաշինու-

գևորական սիրոյ կապակցութեամբ յարակցեալ էր» Աղվանից Սահակ կաթողիկոսի հետ, և նրանք «միմեանց համախոհ եւ յոյժ մերձաւոր»[15] էին: Անանիա Մոկացին դժգոհում է, որ Հակոբը բնավ մոռացել էր «զաւանդ աստուածատուր ձեռնադրութեանն եւ ընկրկեալ ի գրկաց հայրենատուր շնորհէն»[16], իսկ Սահակը չէր հիշում, որ ս. Լուսավորչից էր ստացել «զտուչութեանն պատիւ»[17]: Համերաշխելով Աղվանից եկեղեցապետ Սահակի հետ՝ Հակոբը ստահոդ պատրվակներով նույնպես հրաժարվում է ներկայանալ հայոց նոր հոգևոր վեհապետի ընտրության օրակարգով գումարված եկեղեցական բարձրագույն ժողովին: Հիշյալ ընդդիմադիր հոգևորականները նամակով հայտնում են, որ կընդունեն ցանկացած թեկնածուի, որին «քրիստոսապսակեալ թագաւորքդ եւ սուրբ եպիսկոպոսունքդ ձեռնադրէք յաթոռ սուրբ Լուսաւորչին՝ ծառայել»[18]: Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը, ինչպես նկատում է Մ. Օրմանյանը, ավանդական ուղուց շեղվել էր Աղվանքի Սահակ կաթողիկոսի թելադրանքով[19]:

Ստ. Օրբելյանը խոստովանում է, որ Հակոբն ինքնահավանությամբ գոռոզացել էր, բայց միաժամանակ փորձում է բացատրել վերոհիշյալ իրավիճակի ստեղծման պատճառները: Խուսափելով արաբների մշտական ավազակային հարձակումներից՝ հայոց կաթողիկոսները լքել էին Դվինի կաթողիկոսարանը և թագավորների հետ շրջում էին այստեղ ու այնտեղ, երբեմն բնակվում էին Վասպուրականի թագավոր Գագիկի մոտ՝ Վանա ծովի կղզում, որտեղ էին ս. Գրիգորի սեղանը, աթոռն ու գավազանը, երբեմն՝ Շիրակ գավառի Արգինայի վանքում, ուստի «այս Յակոբ վասն հեռաւորութեան ոչ կարէր ամ յամէ երթալ առ կաթողիկոսն Հայոց և առնուլ մեռոն»[20]: Նա ստիպված էր մեռոնը խնդրել Աղվանից կաթողիկոսից, քանի որ չէր կարողանում ամեն տարի գնալ հայոց կաթողիկոսի մոտ՝ մեռոն ստանալու[21]: **Անկա-**

թյունը (տե՛ս **Ալեքսանյան Վ.**, Հակոբ Ա եպիսկոպոս Սյունեցու գործունեության շուրջ (918–958), «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2014, N 3, էջ 205–208):

15 **Օրբելյան Ստ.**, էջ 200:

16 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 256:

17 Նույն տեղում, էջ 257:

18 Նույն տեղում, էջ 258:

19 Տե՛ս **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հատ. Ա, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2001, էջ 1269:

20 **Օրբելյան Ստ.**, էջ 201:

21 Տե՛ս նույն տեղում: Մեռոն ստանալու համար ամեն տարի կաթողիկոսական նստավայր գնալու այս կարևոր փաստը վկայում է, որ եպիսկոպոսները պարտավոր են

յուն իրավիճակը պատեհ առիթ էր Հայոց արևելից կողմերի համար իրենց «հնամենի ջանքերը վերսկսելու, եւ Սահակ Աղուանից կաթողիկոս նորէն ոյժ տուաւ այդ նպատակին»[22]:

9-րդ դարի վերջերից ահագնացող արտաքին սպառնալիքները և ներքին միասնության բացակայությունը վտանգավոր դրություն էին ստեղծել Հայաստանում, ինչի պատճառով կաթողիկոսներն աստանդական կյանք էին վարում. Հովհաննես Դրասխանակերտցին (898-925) շարունակական փախուստի և թափառումների մեջ էր, նրան հաջորդած Ռշտունի Ստեփանոս (925-926), Թեոդորոս (926-937) և Եղիշե (937-942) կաթողիկոսների գործունեության աշխարհագրությունը գերազանցապես սահմանափակվում էր Վասպուրականով: Այս իրավիճակով պայմանավորված՝ նվազել էր հայոց հոգևոր պետերի ազդեցությունը, և թուլացել նրանց իշխանությունը: Այստեղ կարևոր էր նաև քաղաքական գործոնը, որի բովանդակությունը կազմում էր Բագրատունիների և Արծրունիների մրցակցությունը, որում ծանրության նժարը հետզհետե թեքվում էր Բագրատունիների կողմը: Ուստի Արծրունիների «դուռ»՝ նրանց տիրույթներում գտնվող Աղթամարի աթոռ մեկնելը դիտվում էր ոչ միայն հոգևոր ենթակայության, այլև նրանց քաղաքական գերակայության անուղղակի ընդունում:

2. Նվիրապետական կարգի վերականգնման նախադրյալների ստեղծումը

Հայոց եկեղեցու նորընտիր պետի ռազմավարական ծրագրի բովանդակությունը կազմում էին երկրի հոգևոր-դավանական միասնության վերականգնումը, ազգային անվտանգության ապահովումը և Հայաստան ներթափանցած օտարածին քայքայիչ աղանդների դեմ պայքարը: Այս խնդիրների լուծումը հնարավոր էր հայրապետական ուղղաձիգ կարգի վերականգնման և այդ հիերարխիկ առանցքի շուրջը նվիրապետական աթոռների ներդաշնակ համագործակցության պայմաններում:

եղել տարին առնվազն մեկ անգամ ներկայանալ հոգևոր վեհապետին: Դա դիտվում էր իբրև հպատակության նշան և առաջին հերթին գահերեց-ենթակա հարաբերության վերահաստատում էր, ինչպես նաև ենթադրում է, որ կաթողիկոսին հաշվետվություն է ներկայացվել:

22 **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 1269:

Հայոց եկեղեցու միասնությունը սասանողները հանդես էին գալիս Քաղկեդոնի դրոշի ներքո, այդ իսկ պատճառով հայոց քահանայապետն իր պայքարի սլաքն ուղղել էր առաջին հերթին բյուզանդական եկեղեցական կառույցի պաշտպանների դեմ. «Եւ նախ կամեցաք մաքրել զընծիւղեալ աղանդ Քաղկեդոնի, որ յաշխարհիս Հայոց իբր քաղցկեղ ճարակէր եւ զբոլոր աշխարհս էր կալեալ»[23]: Նման խնդրի լուծումը գործնականում անհնար էր առանց երկրի քաղաքական իշխանության օժանդակության: Ի դեմս Վասպուրականի արքա Դերենիկ Արծրունու (943-959) և հայոց արքա Աբաս Բագրատունու՝ **Անանիա կաթողիկոսը վայելում էր երկրի քաղաքական վերնախավի անվերապահ աջակցությունը**: Քաղկեդոնականների դեմ քայլեր ձեռնարկելու համար նա դիմում է հայոց Աբաս արքային, որն էլ անմիջապես «զհրաման թագաւորասաստ պայմանին դնէր, զի մի ոք իշխեսցէ ամուսնանալ երկաբնակսն եւ աւազակացն զգլխահատմանն տայր վճիռ, եւ եկեղեցեաց զշինութեան տայր զհրաման»[24]: Կարևորելով եկեղեցու դերը երկրի ներքին միասնության ամրապնդման գործում՝ երկու արքաներն անվերապահորեն սատարում էին հայոց հոգևոր վեհապետին, հորդորում նրան ձեռնարկել անհրաժեշտ քայլեր: Դերենիկ Արծրունին «յորդորէր զմեզ մի՛ վհատել եւ մի՛ թողուլ ի ձեռաց զհաւատն հերքեալ, զոչխարն կորուսեալ, զԱղուանից հայրապետն: Գունակ սմին եւ տէր Աբաս Հայոց թագաւոր զնոյն յորդորէր գեղեցիկ հնազանդութեամբ եւ ամենայորդոր փութով»[25]:

Անցնելով գործի Անանիա Մոկացին նվիրակների միջոցով իր մոտ է հրավիրում Սահակ Աղվանցուն և Հակոբ Սյունեցուն, «որպէսզի սիրայորդոր բանակցութեամբ խնդիրը փակէ»[26]: Սակայն նրանք «յիւրաքանչիւր աթոռոց ոչ շարժեցան, այլ բաղբաղեցին զգնալն»[27]: Նրանց վիրավորական վարքագիծը հայոց եկեղեցապետին մղում է կտրուկ գործողությունների: Անանիա Մոկացին «սաստիկ ցասմամբ» որոշում է անձամբ մեկնել Սյունիք, պատժել և հնազանդեցնել «ապստամբ» եպիսկոպոսին, որին ինքն անվանում է «գլուխն եպիսկոպոսաց տանն

23 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 259:
24 Նույն տեղում:
25 Նույն տեղում, էջ 258:
26 **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 1271:
27 **Օրբելյան Ստ.**, էջ 201:

Հայոց»[28]: Բազմաթիվ բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ կաթողիկոսը 943 թ.[29] ժամանում է Սյունիք: Նրան դիմավորում են «տէր Սմբատ Սիւնեաց իշխանաց իշխան եւ տէր Ջուանշէր Բաղաց իշխան»[30]: Կաթողիկոսին արժանավայել պատիվներով ուղեկցում են Տաթևի առաջնորդարան, որտեղ «եպիսկոպոսն Յակոբ և անկաւ առաջի նորա (Անանիա Մոկացու – Վ. Ա.) և զմեղայ խոստովանէր»[31]: Հակոբ եպիսկոպոսը երդում է տալիս հավատարիմ լինելու հայոց հայրապետին և ս. Լուսավորչի աթոռին, իր զղջումն է արտահայտում, թե «մեղաք յերկինս և առաջի քո, և դու ներելով թող մեզ յանցանս մեր»[32]: Բավարարվելով Հակոբի հնազանդության բանավոր երդումներով՝ կաթողիկոսը պատրաստվում է անցնելու Արցախ: Սակայն այդ պահին ստացվում է թագուհու՝ Աբասի տիկնոջ մահվան գույժը: Ընծաներով ծանրաբեռնված՝ նա անմիջապես վերադառնում է Շիրակ՝ կազմակերպելու թագուհու հուղարկավորության արարողությունը: Իսկ «զուղղութիւն Սահակայ կաթողիկոսին Աղուանից թողեալ յայլում ժամու»[33]: Մոկացու հեռանալուց շատ չանցած՝ Հակոբը դրժում է խոստումը և հակակաթողիկոսական ալյանս ստեղծելու առաջարկով դիմում է բազմաթիվ եպիսկոպոսների, որոնց «ուսոյց ապստամբել» կաթողիկոսի դեմ:

Նվիրապետական կարգի վերականգնման և կաթողիկոսական իշխանության ամրապնդման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ **հայրապետական աթոռի հաստատումը երկրի ուժային կենտրոնում, ինչը նշանակում էր քաղաքական և կրոնական ռեսուրսների մեկտեղում ու բացարձակ համագործակցություն**: 947 թ. կաթողիկոսարանն Աղթամարից տեղափոխելով Բագրատունյաց տիրույթներ՝ Անանիա Մոկացին ժամանում է Կարս, որտեղ Աբաս Բագրատունին կառուցել էր կաթողիկե եկեղեցին: Արծրունիների տիրույթներից մրցակից Բագրատունիների ոստան՝ Կարս, հայրապետական աթոռի տեղափոխությունը Հայաստանի քաղաքական խաճանկարում

28 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 256:
29 Տե՛ս **Տեր-Մկրտչյան Գ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատասիր.՝ Պ. Հակոբյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1998, էջ 79:
30 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 258: Հմմտ. **Օրբելյան Ստ.**, էջ 201-202:
31 **Օրբելյան Ստ.**, էջ 202:
32 Նույն տեղում:
33 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 259:

կատարված ուժերի վերադասավորության և իշխանական նոր աստիճանակարգության խոսուն վկայությունն էր: Արծրունիները չեն ընդդիմանում կաթողիկոսարանի տեղափոխությանը Բագրատունյաց տիրույթներ[34], ասել է թե՝ ընդունում են նրանց առաջնությունը Հայաստանում, ինչը փոխհամաձայնության պետականաշահ օրինակ էր:

3. Հայոց կաթողիկոսության գահերեցության վերահաստատումը Հայոց արևելից կողմանց եկեղեցու նկատմամբ

Անանիա Մոկացու՝ Կարս վերադառնալուց որոշ ժամանակ անց վախճանվում է Աղվանից Սահակ կաթողիկոսը, որից հետո իրադրությունն այնտեղ փոխվում է: Սահակին փոխարինում է նրա ազգականներից Գագիկը՝ «նովին թերակատար ձեռնադրութեամբն, զոր ինքն ունէր առանց սրբոյ Լուսաւորչին եւ մերոյ աթոռակալացն»[35]: Ստանալով այս լուրը՝ Մոկացին հայրապետական «իմաստայեղց բանից» շրջաբերական գրությամբ զգուշացնում է Արցախի իշխաններին հեռու մնալ «յանուանեալ և ի նանրափառ կաթողիկոսէն Գագկայ»[36]: Իշխանների մեծ մասը կատարում է հայոց եկեղեցապետի կարգադրությունը և չի ճանաչում Գագիկի հոգևոր իշխանությունը: Բացառություն է կազմում ոմն Սենեքերիմ իշխան, որ «միայն հաւանէր կալ արտաքոյ ճշմարտութեանն»[37]: Շատ չանցած՝ տեղի ավագանու հավանությամբ թեմի առաջնորդ է ընտրվում ոմն Հունան, որին օրինական ձեռնադրության համար ուղարկում են «ի սուրբ աթոռս»՝ Շիրակ: Անանիա հայրապետը պատվով ընդունում է նրան և «ձեռնադրեալ առաքէ յԱղուանս»[38]:

Այդ ընթացքում բանսարկություններով և սադրանքներով շարունակում էր գործել «անաւրէն, չարաբարոյն» Հակոբ Սյունեցին, որը ամեն կերպ խոչընդոտում էր հայոց եկեղեցու առաջնորդի իրավասությունների իրացումը, գործադրում էր բոլոր միջոցները, որ Արցախի

34 Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 123:
35 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 260:
36 **Օրբելյան Ստ.**, էջ 203:
37 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 260:
38 Նույն տեղում:

եկեղեցին չենթարկվի հայոց հայրապետին[39]: Սյունյաց թեմակալը շատ դժգոհ էր կատարվող փոփոխություններից, որովհետև Հունանի ձեռնադրությամբ նա զրկվում էր իր դաշնակից Գագիկից[40]: Նա չարախոսում և Հունանի մասին վարկաբեկիչ լուրեր էր տարածում, ինչի հետևանքով հակաթոռ կաթողիկոսների՝ Հունանի և Գագիկի միջև հակասությունները խորանում են: Շուտով գժտություն է ծագում, և քանի որ Հունանն էլ անբասիր վարքի տեր չէր, երկուսն էլ երկրամասի իշխանների և բնակչության կողմից «խոտեալ լինէին»[41]:

Տեղեկանալով հայոց եկեղեցին պառակտող նշյալ տագնապալի գործընթացների մասին՝ 949 թ. Անանիա Մոկացին, «ժողովեալ զբազմութիւն սուրբ եպիսկոպոսաց եւ սուրբ հարանց եւ գիտնաւոր վարդապետաց»[42], ուղևորվում է Արցախ: Նա հասնում է **Խաչեն գավառ** և հյուրընկալվում տեղի «աստուածապահ եւ բարեպաշտ» գահերեց իշխան Գրիգորի դղյակում: Ջերմ ընդունելության արժանացնելով հայոց եպիսկոպոսապետին՝ Գրիգորը պատրաստակամություն է հայտնում «բառնալ զխռովութիւն եկեղեցւոյ եւ միաբանել ի նոյն կարգ եւ ի կրաւնս եւ ի հաւատ սրբոյ Լուսաւորչին»[43], ինչպես որ ապրել են իրենց նախահայրերը: **Գրիգոր իշխանը հատուկ հրովարտակով Գանձասարի իր ապարանքում**[44] **ժողովի է հրավիրում Արցախ-Ուտիքի և Սյունիքի գավառների ու վանքերի ներկայացուցիչներին:** Նրա կոչով «բազում հարք եւ սուրբ եպիսկոպոսունք, եւ այլ գիտնական քահանայք» հավաքվում եմ Արդախում[45]: Ժողովը գումարվում է համաձայն ազգային-եկեղեցական ժողովական կանոնների, ինչի ամենավառ վկայությունը նրա ներկայացուցչական կազմն էր՝ եպիսկոպոս-

39 Սյունյաց պատմիչը պաշտպանում է Հակոբին՝ ասելով, որ կաթողիկոսի մոտ չարախոսել են նրան, ներկայացրել, թե նորից ապստամբել է և թույլ չի տալիս Աղվանքի հոգևորականներին ենթարկվել հայոց կաթողիկոսին (տե՛ս **Օրբելյան Ստ.**, էջ 202):

40 Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աբաս Բագրատունի: Թագավոր հայոց, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 70:

41 **Օրբելյան Ստ.**, էջ 203:

42 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 261:

43 Նույն տեղում:

44 Տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XIV դարերում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 83:

45 Պատմաբան Բ. Ուլուբաբյանը, հղում անելով Բ. Պիոտրովսկուն, Արդախը նույնացնում է Արցախ աշխարհի հետ և համարում, որ **Արդախ**-ը **Արցախ**-ի սեպագրային անվանումներից է (տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 1998, էջ 6, 166):

ներ, իշխաններ և նշանավոր հոգևոր անձինք: Կաթողիկոսը հակասեհանվանե հիշում է 23 հոգևորականի և ավելացնում. «Եվ այլ բազում գլխաւորք, զորոց աւելորդ համարեցաք յիշատակել զանուանսն»[46]: Մասնակցում էին նաև տխրահռչակ կաթողիկոսներ Գագիկն ու Հունանը, որոնք, անարժան համարվելով, կարգալույծ հռչակվեցին և հեռացվեցին կաթողիկոսական գահից: Խաչենի Գրիգոր իշխանը թախանձում է Մոկացուն կրկին ձեռնադրել Գագիկին, ինչին, ըստ Ստ. Օրբելյանի, հետևում է կաթողիկոսի կտրուկ պատասխանը. «Զի կրկին ծնեալն վիժեալ լինի և կրկին պսակեալն՝ անվաւեր կոչեսցի»[47]: Սակայն շատ չանցած, եկեղեցու շահը գերադասելով արարողակարգային պայմանականություններից և գնահատելով հոտն առանց առաջնորդի թողնելու վտանգները, այնուամենայնիվ, Անանիա Մոկացին տեղի է տալիս Գրիգորի խնդրանքին և Գագիկին վերստին կարգում կաթողիկոս: Այդ մասին են վկայում Մոկացու հետևյալ խոսքերը. «Եւ զերկրորդ ձեռնադրութիւն տալով ուղղափառին (Գագիկին – Վ. Ա.)՝ ի սուրբ կանոնաց երկոքեան լուծման առնուաք հրաման»[48]: Կարելի է կարծել, որ նախքան Գագիկին ձեռնադրելը անհրաժեշտ էր նրան կարգալույծ անել, քանի որ նախկինում նա կանոնների խախտմամբ էր դարձել Աղվանքի կաթողիկոս[49]:

Ժողովի օրակարգային գլխավոր հարցը Հայոց և Աղվանից կաթողիկոսությունների բնականոն փոխհարաբերությունների վերականգնումն էր: Քննության են դրվում հարցին առնչվող հին փաստաթղթեր, որոնք վերաբերում էին հիշյալ աթոռների սկզբնավորմանը: Իրենց հավակնություններն արդարացնելու համար տեղի ավագանուց ոմանք պնդում էին, թե «զլուսաւորութիւն տանն Աղուանից նախագոյ լեալ»: Նրանք վկայակոչում էին Աղվանքի պատմությունը, որի մասին, առանց հեղինակին հիշատակելու, առաջին անգամ խոսում է Անանիա Մոկացին[50]: Կաթողիկոսը ծանոթանում է մատյանին և համոզվում, որ դրա բովանդակած տեղեկությունները համապատասխանում են հայ մատենագիրների վկայություններին: **Երկու եկեղեցի**–

46 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 262:
47 **Օրբելյան Ստ.**, էջ 206:
48 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 262:
49 Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աբաս Բագրատունի: Թագավոր հայոց, էջ 71:
50 Տե՛ս **Акопян А.**, Албания Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., изд. «Гитутюн» НАН РА, 2022, էջ 195–201:

ների հարաբերությունները ծնունդ են առել Աղվանից Գրիգորիս կաթողիկոսի ժամանակներից, որին ձեռնադրել էր Գրիգոր Լուսավորիչը Ուռնայր թագավորի խնդրանքով: Գրիգորիս եպիսկոպոսը Գրիգոր Լուսավորչի թոռն էր և Աղվանից առաջին կաթողիկոսը: Խնդրո առարկա փաստաթղթերը վկայում են, որ Գրիգորիս կաթողիկոսից հետո Աղվանից աթոռը 440 տարի ենթարկվել է հայոց կաթողիկոսին: Մինչև Աբրահամ Աղբաթանեցու (607–615) ժամանակները Աղվանքի արքեպիսկոպոսները ձեռնադրվել են հայոց հայրապետների կողմից: Մոկացին պատմում է քաղկեդոնականության գործած ավերածությունների մասին, որոնց հետևանքը Կյուրիոնի գլխավորությամբ 607 թ. վրաց եկեղեցու առանձնացումն էր հայոց նվիրապետությունից: Աբրահամ Աղբաթանեցու և հակաթոռ կաթողիկոս Հովհաննես Բագարանցու (591–601) հակամարտությունից ծնունդ առած խառնակչության հետևանքով Աղվանից թեմի առաջնորդներն իրենք են ձեռնադրություն կազմակերպում[51]: Վերոհիշյալ հակաթոռ հայրապետների մահից հետո վերականգնվում է Աղվանից եկեղեցու ենթակայությունը հայոց հայրապետներին:

Անանիա Մոկացու՝ Արցախից հեռանալուց առաջ իշխանները վստահեցնում են նրան, որ շուտով ս. Լուսավորչի աթոռ ձեռնադրության կուղարկեն հոգևոր առաջնորդի արժանի թեկնածուի: Ի գիտություն ընդունելով նախարարների խոստումները՝ կաթողիկոսը լքում է երկրամասը և անցնում Սյունիք:

Հայոց արևելից կողմանց ավագանին, սակայն, զանցառեց իր խոստումները և շարունակեց անտեսել կաթողիկոսի գումարած ժողովի որոշումներն ու վարել ապակենտրոն գործելակերպ: **Արցախի իշխանական վերնախավը գտնվում էր արտաքին ուժերի ազդեցության ներքո**, իսկ հոգևորականներին ոգևորում էր հայրապետական կենտրոնից անկախանալու Սյունյաց եպիսկոպոս Հակոբի գործելակերպը: 958 թ. մահանում է Աղվանից եկեղեցու առաջնորդ Գագիկը: Նրա մահից հետո՝ 959 թ., Անանիա Մոկացին երկրորդ անգամ մուտք է գործում Հայոց արևելյան երկրամաս: Նրա խոսքերից երևում է, որ տեղի **իշխանները նույնիսկ փորձել են խոչընդոտել իր մուտքն Արցախ**[52]. մեծ իշխան Սենեքերիմը գուժկանի միջոցով կաթո-

51 Տե՛ս **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 265, **Акопян А.**, նշվ. աշխ., էջ 112–128:
52 Տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, էջ 171:

ղիկոսին հայտնել է, որ իսմայելական զորք է հարձակվել իր երկրի վրա, «գերել եւ աւերել եւ ի սուր սուսերի մաշել», ինչը նշանակում էր, որ Արցախում անապահով վիճակ է, և «մի ևս մտանել առ անգամ մի յամպրոպ դառնութեան»[53]: Հեղինակն այս մասին մանրամասներ չի հաղորդում, սակայն ենթադրվում է, որ Գանձակի մահմեդականների կողմից հարձակման թիրախ էր դարձել Փառիսոսի իշխանությունը, որի հիմնադիրն էր Գարդմանքի իշխան Սահակ Սևադայի թոռ Հովհաննեսը, «որ և Սենեքերիմ կոչեցաւ»[54]: Սակայն նման ահասարսուռ վտանգները հանձնառու կաթողիկոսին ետ չեն պահում իր առաքելությունից: Նրա առջև դրված էր Հայոց արևելից կողմանց հոգևոր կառույցի աթոռահաջորդության ոչ դյուրին գործի կազմակերպումը: **Նա մուտք է գործում հայկական երկրամաս՝ ոչ միայն պաշտպանելու իր աթոռի ձեռնադրության իրավունքը, այլև վերացնելու տեղի եկեղեցի սողոսկած հերձվածական շարժումները և արմատախիլ անելու քաղկեդոնական դավանանքը**[55]:

Հայոց արևելից կողմերում գտնվելու ժամանակ Գրիգոր անունով գուժկանի միջոցով Անանիա Մոկացուն հայտնել են, որ Վասպուրականի թագավոր Դերենիկ Արծրունին (943–959) «վախճանեալ՝ մնայ դին նորա քեզ»[56]: Այս կարճ ընթացքում կաթողիկոսն Աղվանից առաջնորդի հարցը վերջնականապես չի լուծել, սակայն ակնհայտորեն հասունացրել է հանգուցալուծումը: Այդ մասին է վկայում գոհունակությամբ նրա պատմածը, որ Աղվանքում իր կատարած աշխատանքը փայլուն պտուղներ է տվել: Տեղի հզոր և ազդեցիկ իշխանները՝

53 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 273:

54 Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Գ Ողորմած: Թագավոր հայոց, Եր., ԵՊՀ հրատ., 2020, էջ 89, «Հայոց պատմություն», հատ. Բ. Միջին դարեր (IV դար–XVII դարի առաջին կես), գիրք II (IX դարի կես–XVII դարի առաջին կես), Եր., «Զանգակ» հրատ., 2014, էջ 118:

55 Տե՛ս **Կոգեան Լ.**, Հայոց եկեղեցին, Բէյրութ, 1961, էջ 311: Տե՛ս նաև **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X–XIV դարերում, էջ 83:

56 **Օրբելյան Ստ.**, էջ 209: Քանի որ Սյունյաց պատմիչի խոսքում հստակ չէ, թե ով է ուղարկել գուժկանին, ուստի կարելի է նաև ենթադրել, որ **Գրիգոր**-ը եղել է արքայի մահվան արարողությունները կազմակերպող իշխանի անունը: Մ. Օրմանյանը կարծում է, որ հանգուցյալը եղել է Արծրունյաց Աբուսահլ–Համազասպ թագավորի կինը, որի հուղարկավորության եկեղեցաժիսական արարողությունները պետք է կազմակերպեր հայոց կաթողիկոսը (տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 1277): Ա. Եղիազարյանի կարծիքով՝ գուժկան ուղարկողը Վասպուրականի նոր թագավոր Աբուսահլ–Համազասպն էր (959–969), քանի որ վախճանվել էր Գրիգոր–Դերենիկ Արծրունի թագավորը (տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Գ Ողորմած: Թագավոր հայոց, էջ 87):

Ատրներսեհի որդի Իշխանակը, Աղվանից իշխանաց իշխան Սենեքերիմը և նրա տիկինն ու քույրը, ինչպես նաև Խաչենի Գրիգոր իշխանի որդի Սենեքերիմը և Գորոզուքի իշխան Վաչագանը, արևելից իշխան Գուրգենը և բազմաթիվ այլ իշխաններ, իրենց մեղքերը զղջմամբ խոստովանելով, միահամուռ առաջնորդ են ընտրում Խոտակերաց վանքի վանահայր Դավիթին (959–965)՝ «զայր մի հոգեւոր եւ առաքելաջան եւ ծերական ալեաւք պատուեալ»[57], որին ձեռնադրության համար ուղարկում են ս. Լուսավորչի աթոռ: Տեր Անանիան նրան օծում է Հայոց արևելից կողմանց կաթողիկոս 959 թ. «ի Շիրակ գաւառ, ի նստոցն լեալ տեառն Սմբատայ Հայոց թագաւորի, Շիրակավան կոչեցեալ: Եւ լուեալ թագաւոր<ի>ն Հայոց Աշոտ եւ նորին եղբարց Մուշեղայ եւ Ատրներսեհի՝ ուրախ եղեն յոյժ եւ մեծապարգեւ շքեղութեամբ տային ձեռնադրել զնա մերում նուաստութեանս կաթողիկոս Աղուանից նահանգին»[58]: Ողջամիտ կաթողիկոսը չի մոռանում շեշտել նաև նորաթուխ առաջնորդին «առատաձեռն տուչութեամբ» արած իր պարգևը՝ «նշան ոսկեղէն յոյժ ծանրագին, ընդելուզեալ մարգարտովք եւ զարդարեալ ակամբք պատուականաւք»[59]: Հայրապետն այսքանը համարում է կարևորագույն հաղթանակ. «Եւ աւարտեալ հաստատեցաւ ջան վաստակոյ մերում եւ աշխատութիւն բազմամեայ տառապանացն»[60]: **Ավատատիրական մասնատվածության խորացման պայմաններում Հայոց արևելից կողմերում կաթողիկոսի գործողությունների տրամաբանության հիմքում դրված էր երկրի միասնության և համախմբվածության ամրապնդման խնդիրը**՝ տուրք չտալով այդ արժեքները վտանգող հասարակական միտումներին:

Իր թուղթը Անանիա կաթողիկոսն ավարտում է շուրջ երկու տասնամյա գործունեության հաղթական ավարտի նկարագրությամբ. նա վերադառնում է Շիրակ՝ «առ թագաւորն բարեպաշտ Աշոտ Հայոց Մեծաց, որոյ տեսեալ զմեզ ուրախ եղեւ յուրախութիւն մեծ»[61]: Կաթողիկոսը Աշոտ Գ Ողորմածին մանրամասն զեկուցում է Սյունիքում և Արցախում իր կատարած գործերի ու դրանց նշանակալի արդյունքնե-

57 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 273: Ըստ Աղվանից կաթողիկոսության գավազանագրքի՝ նա Դավիթ Զ-ն է:
58 Նույն տեղում:
59 Նույն տեղում:
60 Նույն տեղում:
61 Նույն տեղում:

րի մասին, որոնց համար թագավորը «ուրախ եղեւ»: «Հայ եկեղեցու թեմերի անջատական ձգտումներն ուրիշ բան չէին, քան հայկական իշխանությունների անջատական ձգտումների արտահայտություններ,- գրում է Բ. Առաքելյանը,- հետևաբար կաթողիկոսի պայքարը թեմերի պառակտման դեմ առաջին հերթին քաղաքական նշանակություն ուներ և հենվում էր Բագրատունիների զորեղության և հեղինակության վրա»[62]:

4. Հայոց կաթողիկոսության և Սյունյաց աթոռի բնականոն հարաբերությունների վերականգնումը

Սյունյաց աթոռի հետ խաթարված եկեղեցավարչական հարաբերությունները կարգավորելու և երկրամասում կուտակված կրոնադավանաբանական խնդիրները լուծելու նպատակով Անանիա հայրապետը կրկին ձեռնամուխ է լինում ճանապարհորդության դեպի Սյունիք: 949-950 թթ. ձմռանը նա ժամանում է Տաթև և իր մոտ հրավիրում «ամբարիշտ եւ աղմկասէրն»[63] Հակոբ եպիսկոպոսին: Ընդդիմադիր հոգևորականը հրաժարվում է ներկայանալ եկեղեցու առաջնորդին և, ապաստանելով Բաղաբերդի ամրոցում, ապավինում է Զևանշիր իշխանի պաշտպանությանը: Բավականին մնալով Սյունիքում՝ անխոնջ եկեղեցապետը քանիցս նամակներ է հղում և պատվիրակներ ուղարկում Հակոբի մոտ, փորձում փոխել նրա մոլորամիտ վարքագիծը: Սակայն վերջինս մնում է անդրդվելի: Բանն այն է, որ Հակոբին կամակից էին գավառական շահախնդրությունները միավորված պետության շահերից վեր դասող Սյունյաց նախարարները: Առանց նրանց պաշտպանության՝ թեմի առաջնորդը չէր հանդգնի դուրս գալ հայոց կաթողիկոսի դեմ[64]: Տեղում կաթողիկոսը համոզվում է, որ Սյունիքի իշխանների ու հոգևոր առաջնորդի միջև գործող տանդեմի պայմաններում իր ջանքերն արդյունք չեն տալու: Եվ քանի որ ձմեռային անբարենպաստ եղանակի պատճառով լեռնային տեղանքում ճանապարհները տևական ժամանակ դառնում էին անանցանելի, Անանիա հայրապետը

62 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Գ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 54:
63 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 267:
64 Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 128:

որոշում է վերադառնալ Շիրակ: Բայց նախքան ճանապարհ ընկնելը նա ավերում է Տաթևի առաջնորդարանը «և չարաչար նզովիւք կապեալ կաշկանդեալ խառնեաց ի տոռունս կապանաց զիշխանն և եպիսկոպոսն»[65]: Հեռանալով Սյունիքից՝ հայրապետը չի դադարեցնում «բազում ջանիւք և անբաւ թղթագնացութեամբ»[66] Սյունիքի և Աղվանքի ընդդիմադիր առաջնորդներին հնազանդության բերելու իր ջանքերը, որոնք, սակայն, ապարդյուն են անցնում:

Հայ մատենագիրները և ուսումնասիրողները Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի գործողությունները մեկնաբանում են դավանանքային լույսի ներքո՝ նշելով, որ նա շեղվել էր հայ եկեղեցու ճշմարիտ վարդապետությունից և հարել էր քաղկեդոնականությանը[67]: Այս մեղադրանքն առաջ քաշողը Անանիա Մոկացին էր, ով իր «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» գրվածքի ընդարձակ ու մանվածապատ ներածականում Սյունիքում և Աղվանքում տիրող անջատողական տրամադրությունների պատճառ էր համարում քաղկեդոնական աղանդը: Մեր կարծիքով՝ խնդիրը պետք է քննել առաջին հերթին Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների խորապատկերին: **Հայկական բոլոր երկրամասերը ներառող մեկ միասնական, կենտրոնաձիգ պետություն ստեղծելու Բագրատունի թագավորների ջանքերը բախվում էին ներքին ու արտաքին ուժերի ընդդիմությանը:** Բանն այն է, որ Հայաստանը թևակոխել էր զարգացած ավատատիրությանը բնորոշ մասնատվածության և կենտրոնախույս ձգտումների ակտիվացման դարաշրջան, որը հատուկ էր նաև հոգևոր ավատատիրությանը, որը ձգտում էր անկախանալու կենտրոնից և ինքնուրույն տնօրինելու սեփական թեմը: Սյունիքն իր առանձին թագավորության ստեղծման նախաշեմին էր, և նրա հավակնոտ հոգևոր առաջնորդ Հակոբի կենտրոնախույս ձգտումները, ինչպես նկատում է Գ. Գրիգորյանը, պայմանավորված էին Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքում Սյունյաց նահանգի հատուկ

65 **Օրբելյան Ստ.**, էջ 207: Հմմտ. **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 268: Ինը տարի (949–958) Տաթևի եպիսկոպոսարանն ավերակ վիճակում էր, ինչն արձակել էր Տաթևի կալվածքների վրա աչք ունեցող իշխանների ձեռքերը: Տաթևի վիճակի մեջ մտնող բազմաթիվ գավառներ ստեղծում են առանձին եպիսկոպոսություններ (տե՛ս **Ութմազյան Հ.**, Սյունիքը IX–X դարերում, Եր., ԵՊՀ հրատ., 1958, էջ 130):

66 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 268: Հմմտ. **Օրբելյան Ստ.**, էջ 207:

67 Չամչյանը գրում է, որ Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը հարում էր Թոնդրակյան աղանդին (տե՛ս **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 828):

դերով ու դիրքով[68]: Սյունիքը տնտեսապես և քաղաքականապես զգալիորեն առաջադիմել էր, հակասություն էր առաջացել նրա ռազմատնտեսական կարողությունների և ավատատիրական հիերարխիայում գահերեցների գրաված դիրքի միջև, ինչը հանգեցնում է «ապստամբության»: Այս տեսանկյունից տրամաբանական է Սյունիքի մետրոպոլիտության բախումը կաթողիկոսության հետ, քանի որ վասպուրականցի եպիսկոպոսի ընտրությունը հայոց պատրիարքի պաշտոնում դժգոհություն էր առաջացրել Սյունիքում, ինչը բնական էր[69]: Եվ սա այն դեպքում, երբ Սյունյաց առաջնորդն էր համարվում հայ եպիսկոպոսների «գլուխը», որին էլ օրինաչափորեն պետք է տրվեր նախապատվությունը:

Նահանգների կենտրոնախույս ձգտումները քողարկված ձևով խրախուսվում էին նաև հարևան պետությունների հոգևոր կառույցների կողմից, որոնց օժանդակությամբ Հայաստան էին ներթափանցում տարբեր աղանդներ: Աղանդավորների քայքայիչ գործունեությունը Սյունիքում մեծ տարածում չի ստացել, նրանց չի հաջողվել ստեղծել աղանդավորական համայնքներ, քանի որ հանդիպել են տեղի իշխանությունների հակազդեցությանը: Ինչպես վկայում է Սյունյաց պատմիչը, Հակոբ եպիսկոպոսը պայքարել է աղանդավորների դեմ և չի հարել որևէ աղանդի[70]: Ավելին՝ Սյունյաց իշխանների աջակցությամբ նա դաժանորեն ճնշել է Տաթևի վանքի մերձակա գյուղերի բնակիչների ապստամբությունը: Ուշագրավ է նաև նրա հաշվեհարդարը վանքի միաբաններին և շրջակայքի գյուղացիներին անհանգստություն պատճառող՝ Ավելադաշտ բարձունքի վրա գտնվող «աւազականոց»-ի նկատմամբ, որը «լի էր ելուզակ մարդովք»[71]: Ձենքի ուժով արտաքսելով նրանց այդ հողակտորներից՝ եպիսկոպոսը դրանք սեփականում է հօգուտ վանքի:

Կաթողիկոսարանից Հակոբի անկախանալու կարևոր շարժառիթ էր տնտեսական գործոնը: Մեղադրական շեշտադրմամբ խոսելով Հակոբի մասին՝ Կիրակոս Գանձակեցին ակնարկում է հայ եկեղեցու կրո-

68 Տե՛ս **Գրիգորյան Գ.**, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIII դարերում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 228:

69 Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 131:

70 Հակոբի՝ քաղկեդոնական լինելուն Ստ. Օրբելյանն այսպես է արձագանքում. «Ես իսկ զրպարտանք համարիմ զայսպիսի բանս» (**Օրբելյան Ստ.**, էջ 202):

71 Նույն տեղում, էջ 188:

նադավանաբանական սկզբունքներից նրա շեղվելու մասին, քանի որ **«սկսաւ նորաձևութիւնս առնել խօսից եւ կարգաց»**[72]: Հակոբը և իր համախոհները գտնում էին, որ «ոչ է պարտ եպիսկոպոսի ընծայաբեր լինել եպիսկոպոսապետի, այսինքն՝ կաթողիկոսի»[73], քանի որ նրա գահերեցությունն ավելի շատ անվանական է, քան գործնական: Նրանց համոզմամբ՝ կաթողիկոս ասվածն ընդամենը տիտղոս է և ոչ թե նվիրապետական կարգի գլուխ, հետևաբար կաթողիկոսն իշխանություն չունի եպիսկոպոսի նկատմամբ[74]: Կ. Գանձակեցու խոսքերի քննությունը ցույց է տալիս, որ խաթարվել էին նաև հայրապետական և Սյունյաց աթոռների միջև գործող ավանդական տնտեսական հարաբերությունները: Վերջինիս առաջնորդը հրաժարվում էր «ընծայաբեր» լինել, այսինքն՝ **վճարել հայրապետական աթոռի տարեկան հարկը՝ տասանորդը**, որն ի վերուստ գործել է հայ եկեղեցում: Սա նշանակում է, որ Հակոբի չներկայանալը կաթողիկոսարան պայմանավորված էր ոչ միայն մշտական նստավայրի բացակայությամբ կամ աշխարհագրական հեռավորությամբ, այլև տնտեսական գործոններով: Ակնհայտ է, որ նահանգային հոգևոր առաջնորդի «ընդվզումը» ուներ տնտեսական շարժառիթ[75]: Օտարամուտ գաղափարների ազդեցության հետևանքով խախտվել էին եկեղեցական տասանորդի և պտղի կանոնավոր վճարումները[76]: Կարելի է պնդել, որ Հակոբ Սյունեցուն Անանիա Մոկացին հալածում էր ոչ թե թոնդրակեցիներին կամ քաղկեդոնականներին հարելու, այլ մեռոնն Աղվանքից ստանալու և հայրապետական աթոռին տասանորդ չվճարելու համար[77]:

---

72 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիր.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1961, էջ 85 (այսուհետ՝ **Կիրակոս Գանձակեցի**): Ն. Ակինյանը կարծում է, որ Սյունիքի աղանդավորները հարել են վրաց քաղկեդոնականներին (տե՛ս **Ակինեան Ն.**, Կիւրիոն կաթողիկոս վրաց, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1910, էջ 81):

73 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 85: Կ. Գանձակեցին հիշատակում է Հակոբի համախոհներից մեկին, որի անունը Խոսրով էր (տե՛ս նույն տեղում): Ստ. Օրբելյանը հստակեցնում է, որ այդ անձը եղել է Խոսրով Անձևացին՝ Անձևացյաց թեմի եպիսկոպոս-առաջնորդը (տե՛ս **Օրբելյան Ստ.**, էջ 202): Մ. Չամչյանը խոսում է ոմն Խոսրովի մասին, որին կոչում է «քորեպիսկոպոս» (տե՛ս **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 828):

74 Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 85:

75 Տե՛ս **Սարգսյան Լ.**, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները IX–XIV դարերում, Եր., «Էդիթ պրինտ», 2007, էջ 22, **Ալեքսանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 199:

76 Տե՛ս **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դդ., հատ. Բ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964, էջ 247:

77 Տե՛ս **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 228:

Անանիա Մոկացին իր չորրորդ թղթում հատուկ քննարկման առարկա է դարձնում եկեղեցուն և կաթողիկոսական աթոռին տրվող տուրքերի հարցը, որոնց նախատիպերը վկայված են Հին և Նոր Կտակարաններում: Գիտնական եկեղեցապետը պնդում էր, որ եպիսկոպոսը պարտավոր է ենթարկվել կաթողիկոսին և տուրք վճարել իր ստացվածքից: Իսկ հայրապետի հանդեպ եպիսկոպոսի պարտավորվածությունը և, այսպես կոչված, «երախայրեաց պտուղ» տուրք վճարելու ավանդական սովորույթը հիմնավորվում են Ս. Գրքում հաստատագրված օրենքով. «Երիցս անգամ ի տարւոջն յանդիման լինել... ելանել ի տեղին, զոր ընտրեսցէ Տէր, և զայն՝ ոչ դատարկաձեռն»[78]:

Սյունիքի մետրոպոլիտ Հակոբի ըմբոստությունը շարունակվում է մինչև իր մահը՝ 958 թվականը: Նրա մահով Սյունիքում անորոշ և անկայուն իրավիճակ է ստեղծվում: Տիրող անորոշությանը վերջ տալու և նոր առաջնորդի ընտրություն կազմակերպելու նպատակով արդեն «ծերական տկարութեամբ», բայց վճռական կամքով հովվապետը, չսպասելով նույնիսկ գարնան բացվելուն, 958 թ.՝ «ի ժամանակս ձմեռնային եւ ի ժամս դառնաշունչ»[79], երրորդ անգամ ուղևորվում է Սյունիք: Կաթողիկոսը պետք է վճռահատեր տասնամյակներով այնտեղ ձևավորված խնդրահարույց երևույթները: Նա գնում է «յանբնակ տեղի եպիսկոպոսարանին Սիւնեաց» և հոգ է տանում իր ավերած Տաթևի կենտրոնի վերաշինության մասին («.... հրաման տայր ժողովիլ կրօնաւորաց և շինել զտեղին»[80]), կանոնավորում միաբանության գործերը: Կապանում մեղայականով և զղջման խոստովանությամբ նրան են ներկայանում բանադրված իշխաններ Ջևանշիրն ու Սյունյաց Սմբատ իշխանի որդի գահերեց Վասակը (958–963): Իր թղթում կաթողիկոսը շեշտում է, որ «Բաղաց բռնակալ» Ջևանշիրն իրեն ներկայանում է ողջ գերդաստանով և ներում խնդրում. «.... աղիողորմ զթովք եւ խանթակաթ արտասուաւք եւ ուղիղ դարձիւ, սրտալիր մեղայիւ՝ առաջի անկանէր»[81]: Ստորացուցիչ այս տեսարանի նկարագրությամբ կաթողիկոսը յուրատեսակ պատասխան է տալիս նախկինում իր կրած վիրավորանքներին, այդ խոսքերը նրա արժանապատվության ու ինք–

78 «Նորին տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի», «Մատենագիրք հայոց», հատ. Ժ, էջ 287:

79 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 269:

80 **Օրբելյան Ստ.**, էջ 207:

81 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 269: Հմմտ. **Օրբելյան Ստ.**, էջ 207-208:

նասիրության նվաստացման չնչին փոխհատուցումն էին: Զգալի ժամանակ մնալով Սյունիքում՝ կաթողիկոսը լուծում է տարիներով կուտակված բազմաթիվ խնդիրներ, բնականոն հուն վերադարձնում եկեղեցաքաղաքական հարաբերությունները, վերացնում խռովության մնացորդները: Երկրամասի իշխանները դիմում են կաթողիկոսին Սյունիքի նոր առաջնորդի ձեռնադրության խնդրանքով: Ընդառաջ գնալով տեղի բարեպաշտ մարդկանց և վանականների խնդրանքներին՝ Անանիա Մոկացին 959 թ.[82] Վահանավանքում ձեռնադրում և «կացոյց յեպիսկոպոսութեան Սիւնեաց զՎահան՝ որդի Զեւանշիրի, որ էր առաջնորդ մեծի ուխտին Վահանու վանից»[83]: Կաթողիկոսը նրան բնութագրում է որպես հոգևոր բարձր արժանիքների տեր անձնավորության՝ «զխաչակրօն և զսրբասնունդ տէր Վահան»[84]: Գործունյա հայրապետը, որը հայոց նվիրապետական աթոռների հետ աշխատելու մեծ փորձ ուներ, նորընտիր եպիսկոպոսից, ինչպես նաև Զեւանշիր և Վասակ իշխաններից պահանջում է **գրավոր դատապարտել նախորդ առաջնորդի՝ «չարասադիր եւ ապստամբամիտ խաբողն Յակոբայ»**[85] կենտրոնախույս դիրքորոշումը և ճանաչել միայն հայոց հայրապետի գերագահությունը: Կազմվում է երդման և հպատակության երկարաշունչ գիր: Այն հաստատագրում է, որ Սյունյաց տերերը ապագայում այլևս չեն շեղվի հայ եկեղեցու նվիրապետական կարգից ու դավանաբանությունից և կառաջնորդվեն միայն նրա սահմանած կանոններով: Խոստումնագիրն ավարտվում է սոսկալի նզովքներով, ինչը վկայում է հայոց հայրապետի վճռական տրամադրվածության և դավանանքային շեղումների նկատմամբ անհանդուրժողականության մասին. «Զի մի ոք իշխեսցէ յեպիսկոպոսաց զՅակոբայն գործել կամ խոկալ կամ խորհելու ոճիրս. և զի մի ոք յիշխանաց իշխեսցէ այնպիսոյն թեկն ածել և օգնական կամ ջատագով լինել. և եթէ յանդգնի ոք յեպիսկոպոսաց՝ փութապէս ի ձեռս տացեն կաթողիկոսին Հայոց և մի լիցին դարան և ասպնջական նմա»[86]: Իրենց մատանիներով կնքելով

82 Օրմանյանի կարծիքով՝ ձեռնադրությունը տեղի է ունեցել 961 թ. (տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 1276):
83 **Օրբելյան Ստ.**, էջ 208:
84 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 269: Հմմտ. **Օրբելյան Ստ.**, էջ 208:
85 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 270:
86 **Օրբելյան Ստ.**, էջ 208: Հմմտ. **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 272:

սույն «Հաւատոյ նամակ»-ները՝ Սյունյաց իշխանները դրանք հանձնում են կաթողիկոսին:

«Ապստամբ» հորջորջված Սյունյաց առաջնորդ Հակոբի և տեղի իշխանների ապստամբական վարքագիծն ու անկախության հավակնությունները էժան չարժեցան բարձրապատիվ աթոռի համար: Հայ եկեղեցում համանման դրսևորումներն այլևս կանխարգելելու դիտավորությամբ Անանիա Մոկացին վճռական որոշում է ընդունում, այն է՝ **զրկել Սյունյաց աթոռը մետրոպոլիտական պատվից**՝ վերցնելով նրանից այդ կարգավիճակից բխող առանձնաշնորհումները: Սյունյաց աթոռը զրկվեց հայոց թագավորների և հայրապետների սահմանած պատվո խորհրդանշաններից, որոնցից էին առջևից տարվող խաչը, մեծարժեք գավազանը, ոսկեթել գահավորակը[87]:

Հայոց բազմափորձ հայրապետին հաջողվում է վերջ դնել հայ եկեղեցու՝ տասնամյակներ ձգվող երկփեղկվածությանը և վերահաստատել ի վերուստ սահմանված նվիրապետական կարգը: Անթաքույց ուրախությամբ և առանց ավելորդ բառերի Ստ. Օրբելյանն արձանագրում է, որ Անանիա Մոկացին վերացրեց «զմեծ պատերազմն եկեղեցւոյ» և խաղաղություն պարգևեց «կեղեքեալ և տառապեալ ազգիս Հայոց»[88]: Նա ամրապնդում է Սյունիքի եկեղեցին, համախմբում վանական միաբանությանը, որում վերստին ներառում է նախկինում շեղված «զպատուական անդամսն եկեղեցւոյ», և այն հանձնում ս. Լուսավորչի աթոռի ժառանգորդների տնօրինությանը[89]: Նման համառ պայքարից հետո, եթե որևէ մեկը «խորհի կամ մտաբերէ ընդ այն կորստական շաւիղս ընթանալ և ի բաց կալ ի Հայոց կաթողիկոսացն՝ կամ Սիւնեաց եպիսկոպոս, կամ Աղուանից արքեպիսկոպոս՝ զինչ և իցէ պատճառաւ բաց ի հոգևոր վնասուց, եթէ հերձուած ինչ կամ անպատշաճ նորաձևութիւն երևեսցի», կարժանանա Սուրբ Երրորդության նզովքին և կդատապարտվի սատանայի հետ: Հանձնառու հովվապետի հետևողական քայլերի շնորհիվ հայոց եկեղեցու պառակտման փորձերը տապալվեցին, ինչը համընդհանուր գոհունակություն առաջ

87 Տե՛ս **Օրբելյան Ստ.**, 208: Այս փաստի մասին հակառակն է հիշատակում 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին՝ ասելով՝ «հրամայեաց խաչ տանել առաջի արքեպիսկոպոսին Սիւնեաց, ուր և երթիցէ» (**Կիրակոս Գանձակեցի**, էջ 87): Այս հարցի առնչությամբ, բնականաբար, առավել հավաստի է Սյունյաց պատմիչի հաղորդածը: Հավանաբար Կ. Գանձակեցուն ծանոթ չի եղել Անանիա Մոկացու թուղթը:

88 **Օրբելյան Ստ.**, էջ 209:

89 Տե՛ս նույն տեղում:

բերեց. «.... գոհութիւն և փառք վերառաքեցաւ յամենայն լեզուաց բարերարին Աստուծոյ»[90]:

Պետք է նկատել, որ Անանիա Մոկացու գործունեության այս փուլում Բագրատունիները՝ ի դեմս Աշոտ Գ Ողորմածի (953–978), ավելի էին զորեղացել, և հայոց հայրապետի գործողությունները լիովին համահունչ էին նրանց վարած կենտրոնաձիգ քաղաքականության տրամաբանությանը: Եկեղեցու գործողությունները ստանում էին Անիի Բագրատունիների անվերապահ քաղաքական աջակցությունը, ինչի մասին վկայում է Աբասի որդի Աշոտ Գ Ողորմածին Անանիա Մոկացու տված բնութագիրը. «Եվ յաջորդէ զաթոռ թագաւորութեանն նորին որդի տէր Աշոտ, Հայոց իշխանաց իշխան, հանճարեղ եւ իմաստուն, այր գեղեցկատեսիլ, կրաւնաւորասէր եւ ուղղադատ, ահարկու աւազակաց եւ չարագործաց, եւ սիրիչ սրբոց, եւ թագ պարծանաց սրբոյ Լուսաւորչի աթոռոյս»[91]:

5. Անանիա Մոկացու պայքարը նվիրապետական կարգի խախտման փորձերի դեմ Վասպուրականում

Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի և Աղվանից Սահակ կաթողիկոսի ընդվզումը հայոց եկեղեցու սրբագործված նվիրապետական կարգի դեմ և հայոց հայրապետի գերագույն իշխանության վիճարկումը արձագանք են գտնում նաև Վասպուրականում: «Երբ Սիւնեաց արքեպիսկոպոսը Հայոց կաթողիկոսին դէմ կ'ելլէր,– գրում է Մ. Օրմանյանը,– Անձեւացեաց եպիսկոպոսն ալ, որ նոյնպէս յատուկ իշխանութեան մը եկեղեցական պետն էր, նա ալ Հայաստանի հարաւէն կը ձայնակցէր հիւսիսային շարժումին»[92]: 940–ական թթ. վերջերին հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին Անձևացյաց գավառի եպիսկոպոս է ձեռնադրում Խոսրովին[93]: Վերջինս Անանիա Նարեկացու հորեղբոր փեսան էր և նշանավոր Սահակ, Հովհաննես և Գրիգոր Նարեկացիների հայրը: Սկզբնաղբյուրներում նրա անունը հիշվում է գովեստով ու

90 Նույն տեղում:

91 **Անանիա Մոկացի**, թուղթ Ա, էջ 268:

92 **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 1280:

93 Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի կարծիքով՝ Խոսրովը նախկինում եղել է ամուսնացած քահանա և ոչ աշխարհական: Կնոջ մահից հետո նվիրվել է ճգնավորության (տե՛ս **Գալստանյան Բ.**, նշվ. աշխ., էջ 13–14):

հարգանքով: Մ. Չամչյանը խոսում է Խոսրովի՝ հունական կրթություն ստացած լինելու մասին[94]: Համակրական վերաբերմունք չունենալով Խոսրովի նկատմամբ՝ Անանիա Մոկացին բարձր է գնահատում նրան՝ բնութագրելով որպես **«այր համեստ եւ գիտնաւոր եւ ալեաւք ծերութեամբ զարգացեալ»**[95]: Կնոջ վախճանվելուց հետո Խոսրովը թողել էր աշխարհիկ կյանքը և ընդունել հոգևոր աստիճան:

Իր թղթում, պատմելով անջատողականության ուղին բռնած Հայոց արևելից կողմերի և Սյունյաց աթոռների դեմ իր ձեռնարկած գործողությունների մասին, Անանիա Մոկացին հիշատակում է վարդապետների և ճարտասան-փիլիսոփաների անուններ, որոնք աջակցել են իրեն այդ դժվարին գործում: Այդ ճակատում գաղափարական մեծ օժանդակություն ցույց տված հոգեկիր վարժապետների, իմաստասերների ու ճարտասանների թվում նա հիշում է նաև **«Խոստրով գիտնականի»** անունը: Պ. Խաչատրյանի կարծիքով՝ այս գիտնականը նույն ինքը՝ Խոսրով Անձևացին է[96]: Ենթադրվում է, որ կաթողիկոսը պայքարի առաջին փուլում իրեն սատարած Խոսրովին մեծարել է և երախտագիտությամբ կարգել Անձևացյաց գավառի եպիսկոպոս:

Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը դավանաբանական հարցերով թղթակցել է Խոսրով Անձևացու հետ. «Եվ զԽոսրով՝ Անձևացեաց եպիսկոպոսն նա (Հակոբ եպիսկոպոսը – Վ. Ա.) շեղեաց թղթով»[97]: Նրան մեղադրում էին քողարկված քաղկեդոնականության մեջ: Անանիա Մոկացու «Պատճառ յաղագս զԽոսրով նզովելոյն զԱնձեւացւոց եպիսկոպոսն» երկից պարզ է դառնում, որ Խոսրովը մեղադրվել է հայոց եկեղեցի նորաձևություններ ներմուծելու և աղանդավորությանը հարելու մեջ: 954–955 թթ. նա հարուցել է լեզվական և ծիսական բնույթի խնդիրներ, որոնք խորթ էին հայ եկեղեցու խոսույթին և ավանդությանը. Խոսրով եպիսկոպոսը «սկսաւ այլ իմն նոր հերձուած աւանդել, մուծանել յեկեղեցի Աստուծայ»[98]: Անձևացին ավելորդ էր համարում խաչի օրհնությունը. «Այն խաչն, որ քահա-

94 Տե՛ս **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 839:

95 «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի պատճառ յաղագս զԽոսրով նզովելոյն զԱնձեւացւոց եպիսկոպոսն», «Մատենագիրք հայոց», հատ. Ժ, էջ 276 (այսուհետ՝ **Անանիա Մոկացի**, թուղթ Բ):

96 Տե՛ս **Խաչատրյան Պ.**, նշվ. աշխ., էջ 37:

97 **Օրբելյան Ստ.**, էջ 202:

98 **Անանիա Մոկացի**, թուղթ Բ, էջ 276:

նայքն աւրինեն և այլ՝ զոր ոչ աւրինեն, միապատիւ է եւ աւելորդ զաւրինելն վարկանիմ»[99]: Նա գտնում էր, որ եպիսկոպոսն ու հայրապետը համապատիվ են, հայրապետն ամենևին էլ երիցություն չունի եպիսկոպոսի նկատմամբ, քանի որ նրան ընտրողները եպիսկոպոսներն են: Այստեղից էլ հետևություն էր անում. «Ոչ է պարտ եպիսկոպոսապետի այսինքն կաթողիկոսի հլու լինել, զի աւելի ոչինչ չունի, բայց միայն զանուանակոչութիւն»[100]: Սա նշանակում է, որ եպիսկոպոսը պարտավոր չէ ենթարկվել կաթողիկոսին ու նրան տուրք վճարել իր ստացվածքից: Խոսրովի քարոզած գաղափարները, ըստ էության, հանգում էին հետևյալ պահանջներին՝ **վերացնել կաթողիկոսական աթոռը, կազմալուծել գործող նվիրապետական կարգը**[101]: Նորաբողբոջ այս աղանդն Անանիա Մոկացին նմանեցնում էր վաղենտինականությանը, որի հետևորդները հանդգնում էին ասել, թե իրենք «գիտունք» են, քան իրենց «Արարիչը», որովհետև «Արարիչը» «շնչական» է, մինչդեռ իրենք «հոգեւորք են»[102]:

Սկզբում կաթողիկոսը հանդուրժել է Խոսրով Անձևացու գաղափարները՝ հույս ունենալով, որ նա կվերադառնա հայոց նվիրապետական ճշմարիտ սկզբունքներին: Սակայն մինչև կյանքի վերջ Խոսրովը անդրդվելի մնաց իր համոզմունքների մեջ, նույնիսկ կաթողիկոսի արտասվագին հորդորներն ազդեցություն չունեցան, «եւ զնոյն թաւշակ տարաւ առ հանդերձեալսն պաշար կորստեան, զի ոչ զդջացաւ մինչեւ իր վերջին շունչն»[103]: Տեսնելով, որ հայ եկեղեցու նվիրապետական սկզբունքները խարխլող գաղափարներն անտեսանելիորեն խրախուսվում են արտաքին ուժերի կողմից, կաթողիկոսը ստիպված է լինում դիմել կտրուկ միջոցների. **954 թ. հերձվածողության համար բանադրում և դատապարտում է Խոսրով Անձևացուն**[104]: Երախտագիտությունն ու հարգանքն արգելք չհանդիսացան, որ հայոց

99 Նույն տեղում:

100 Նույն տեղում: Հմմտ. **Կիրակոս Գանձակեցի**, էջ 85–86:

101 Տե՛ս **Քյոսեյան Հ.**, Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, Եր., Մատենադարանի հրատ., 2018, էջ 292:

102 **Խաչատրյան Պ.**, նշվ. աշխ., էջ 41:

103 **Անանիա Մոկացի**, թուղթ Բ, էջ 276:

104 Բ. Գալստանյանը կարծում է, որ Անանիա Մոկացին ակնկալել է, որ Խոսրով Անձևացին որևէ զղջումնագիր կամ դարձի թուղթ կներկայացնի իրեն, սակայն դա տեղի չի ունեցել: Կաթողիկոսը միայն նրա մահից հետո է հրապարակ հանել բանադրանքի թուղթը (տե՛ս **Գալստանյան Բ.**, նշվ. աշխ., էջ 17):

հոգևոր վեհապետը պատժիչ միջոցներ ձեռնարկեր նվիրապետական կարգի դեմ ոտնձգած հոգևորականի և նրա համախոհների նկատմամբ:

Խոսրով Անձևացու քաղկեդոնական կամ թոնդրակյան լինելու վերաբերյալ փաստերը համոզիչ չեն, հետևաբար կարելի է պնդել, որ Անձևացին ցանկացել է ոչ թե նորաձևել, այլ բարեկարգել հայ եկեղեցու խաթարված և խեղաթյուրված կարգ ու կանոնը, որ հաստատել էին ս. Գրիգոր Լուսավորիչը և մյուս հայրապետներն ու վարդապետները: Կարելի է եզրակացնել, որ 10-րդ դարի առաջադեմ հոգևոր գործիչներ Անանիա Նարեկացին և Խոսրով Անձևացին հարել են բարենորոգչական այն հոսանքին, որը միջին դիրք էր զբաղեցնում ամբողջ երկրում տարածված աղանդավորության և պաշտոնական եկեղեցու միջև ու հաշտության եզրեր էր փնտրում այդ երկու ծայրաբևեռների համար[105]: Այս եզրակացությունը հաստատվում է Գրիգոր Նարեկացու՝ իր հորը տված գնահատականով՝ «յոյժ հետեւողի պատուիրանացն Աստուծոյ»[106]:

Անանիա Մոկացու պատվերով նշանավոր աստվածաբան, մատենագիր, Նարեկյան դպրոցի հիմնադիր Անանիա Նարեկացին 960-ական թթ. գրում է «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցւոց» երկը, որը դառնում է աղանդավորության դեմ պայքարող հայ ուղղափառ հոգևորականության տեսական-քարոզչական գործիքներից մեկը: Պաշտոնապես հերքելով իրեն հասցեագրված մեղադրանքները՝ Անանիա Նարեկացին նզովում է թոնդրակեցիներին և բացահայտում նրանց սխալներն ու մոլորությունները[107]:

Խոսրով Անձևացու գլխավորությամբ Վասպուրականում խմորվող շարժումը, ի տարբերություն Սյունյաց և Աղվանից աթոռների գործնական ընդվզումների, չուղեկցվեց ըմբոստության ցույցերով:

---

105 Տե՛ս **Թամրազեան Հր.**, Անանիա Նարեկացի, «Մատենագիրք հայոց», հատ. Ժ, էջ 324:

106 **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 1282:

107 Տե՛ս **Անանիա Նարեկացի**, Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցւոց, «Մատենագիրք հայոց», հատ. Ժ, էջ 436-438: Այս գործի մասին առաջին հիշատակությունը պատկանում է Գրիգոր Մագիստրոսին (տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագիրն առաջաբանով՝ **Կ. Կոստանեանցի**, Աղեքսանդրապոլ, տպ. Գէորգ Սանոյեանցի, 1910, էջ 153): Ղ. Ալիշանի կարծիքով՝ Անանիա Նարեկացին ամբաստանվել է ոչ թե թոնդրակյան շարժմանը, այլ քաղկեդոնականությանը հարելու համար (տե՛ս **Ալիշան Ղ.**, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք հայոց, մաս Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 210):

Հայոց եկեղեցու նվիրապետական սկզբունքների «բարեփոխմանը» միտված շարժումը կաթողիկոսի ջանքերով կասեցվեց տեսական-գաղափարական մակարդակում:

6. Վանականության զարգացումն Անանիա Մոկացու օրոք

10-րդ դարը նշանավորվեց վանական շարժման ծավալումով, որի շնորհիվ տնտեսական մեծ ներուժի տիրապետող վանքերը դարձան **կրթական-մշակութային օջախներ**, ինչպես նաև աղանդավորական հոսանքների դեմ պայքարի կենտրոններ: Որպես հոգևորական ձևավորված լինելով վանական միջավայրում՝ Անանիա Մոկացին աջակցում էր վանական կյանքի ծավալմանը: Հայաստանում վանականության զարգացման համար լրացուցիչ խթան հանդիսացավ Բյուզանդիայի վարած կրոնական քաղաքականությունը[108]: Բյուզանդիայի կայսր Ռոմանոս Ա-ի (920-944) օրոք սկսվում և Ռոմանոս Բ-ի (959-963) օրոք զգալիորեն խստանում են կայսրության արևելյան նահանգներում ապրող հակաքաղկեդոնական հայերի հալածանքները: Չհամաձայնելով ընդունել քաղկեդոնականությունը՝ «բազմութիւնք կրօնաւորաց հալածեալք ի Հոռոմոց աշխարհէն սակս ուղղափառութեան»[109] եկան ու հաստատվեցին հայոց թագավորություններում և ընդունվեցին հոգևորականության, իշխանական դասի ու բնակչության կողմից: Կայսրության մեջ ծավալված հիշյալ հալածանքների պատճառով մի խումբ աստվածաբան վարդապետների «խորհրդական քննութեամբ» 960-ական թթ. **«զքաղկեդոնական մկրտեալսն կրկին անգամ հրամայեցին մկրտել»**[110]: Կրկնամկրտությունը խորթ է հայ եկեղեցու աստվածաբանությանը, և բազմաթիվ հայ վարդապետներ հետագա դա-

108 Նույն շրջանում վանականությունն աննախադեպ զարգացում է ապրում նաև Բյուզանդիայում (տե՛ս **Скабаланович Н.**, Византийское государство и церковь, С. Петербург, Типография Ф. Елеонского, 1884, էջ 425-440):

109 **Վարդան վարդապետ**, էջ 88, **Կիրակոս Գանձակեցի**, էջ 84: Հայերը հրաժարվում էին հավատափոխությունից՝ հասկանալով, որ իրենց ինքնության պահպանման միակ գրավականը հայոց ուղիղ դավանանքն է (տե՛ս **Гренъ А.**, Династия Багратидов в Армении, «Журнал министерства народного просвещения», ССХС, С.-Петербург, Типография В. Балашева, 1893, N 11, էջ 100):

110 **Ասողիկ**, էջ 754: Ն. Ակինյանի կարծիքով՝ նշյալ աստվածաբան վարդապետների խմբում է եղել նաև Ուխտանեսը, իսկ կրկին մկրտվողները եղել են քաղկեդոնիկ ծաթեր (տե՛ս **Ակինեան Ն.**, նշվ. աշխ., էջ 80):

րերում պայքարել են դրա դեմ: Մկրտությունն անկրկնելի խորհուրդ ունի, և ընդունելի են այն բոլոր մկրտությունները, որոնք կատարվում են Ս. Երրորդության և Հիսուս Քրիստոսի անունով[111]: Սակայն այդ իրավիճակում հայոց եպիսկոպոսապետի քայլը, ինչպես նկատում է Մ. Օրմանյանը, «պէտք է անցընել գերզգօնութենէ բղխած բացառիկ եւ անցողական որոշմանց կարգին, որոնք ստիպողական արարքներու դէմ՝ վերահաս վտանգներու առջեւն առնելու կը ծառայեն, եւ հաստատուն կանոն չեն նկատուիր»[112]:

Անանիա Մոկացու հովվապետության շրջանում վարվող եկեղեցաշինական քաղաքականության շնորհիվ և վերոնշյալ ներգաղթով պայմանավորված՝ մեծապես ծաղկում են վանական հաստատությունները, աճում է նրանց թիվը: Անանիա կաթողիկոսի օրոք Հայաստանում, ինչպես գրում է Ասողիկը, «ծաղկեալ պայծառանայր կարգ կրաւնաւորական հանդիսից: Ի յոլով տեղիս շինեցան եղբայրանոցք, եւ ժողովեցան միաբանակեացք եւ հաւասարականք սիրովն Քրիստոսի»[113]: Կառուցվում են բազմաթիվ վանքեր, հիմնվում մեծ թվով միաբանություններ, որոնք այդ ժամանակից ի վեր դառնում են հայ գրչության և մատենագրության կենտրոններ:

Առաջին վանքերից մեկը, որ հիմնադրեցին կայսերական հալածանքներից խույս տված կրոնավորները, **Կամրջաձորի վանքն էր** Արշարունյաց գավառում: Տեղի առաջնորդ Հովհաննեսը (939-950)՝ «հալածեալ յարեւմտեայ աշխարհէն, Եգերացւոց գաւառէն», իր հետ Կամրջաձորի վանք էր բերել «զհրազէն նշանն (խաչափայտը – Վ. Ա.) տերունական»[114]: Մ. Օրմանյանն իրավացիորեն կարծում է, որ վանքն իր հայանուն կոչումն առաջին անգամ ստացել է Այրարատում[115]: Հովհաննես վանահոր հետ եկած 40 կրոնավորներ հիմնում են վանական միաբանություն, իսկ շատ չանցած՝ միաբանության անդամների թիվը հասնում է 300-ի: Հովհաննեսին փոխարինում է Պողիկարպոսը, որը հայտնի էր որպես «հաւաստի կրաւնիցն պահապան», իսկ

111 Տե՛ս **Պետրոսյան Ե.**, Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա (Սկզբից մինչև 1441 թ.), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, «Հաղբատավանք» բարեգործական միություն, 1990, էջ 76:

112 **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 1290:

113 **Ասողիկ**, էջ 750:

114 Նույն տեղում:

115 Տե՛ս **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 1285:

նրան էլ հաջորդում է նշանավոր առաջնորդ Սամվել Կամրջաձորեցին՝ «բազմաշնորհին ի գիտութիւնս Գրոց սրբոցն եւ յերգս երաժշտութեանց»[116]:

Մյուս վանքը, որ կարևոր դեր է խաղացել հայոց եկեղեցու պատմության մեջ, **Հոռոմոս** կամ **Հոռոմոց վանքն** էր, որն այդպես է կոչվել, քանի որ կառուցողները «ի Հոռոմոց կողմանցն եկին»[117]: Այն կոչվել է նաև **Խոշավանք** իր երկու քառակուսի աշտարակների պատճառով: Վանքը կառուցվել է Շիրակում Հովհաննես վանահոր կողմից, «որ էր զարդարեալ յամենայն առաքինութիւնս» և գթառատ վարքով, Աբաս թագավորի օրոք, հետո ավերվել է Ապլհաճ պարսիկ ամիրայի ձեռքով և վերակառուցվել Հովհաննես-Սմբատ թագավորի հովանավորությամբ ու թերևս այդ ժամանակվանից էլ կոչվել Ս. Հովհաննես[118]:

Նորաշեն է համարվել **Շիրակի դպրեվանքը**, սակայն իրականում այն միայն վերաշինվել է, քանի որ նրա գոյությունն արձանագրված է 7-րդ դարում՝ կապված Բարսեղ Ճոն վարդապետի վանահայրության հետ: Նշանավոր էր **Կապուտքարի վանքը**, որը տեղորոշում են Կապույտ գետի ձորում՝ Երասխաձոր գավառում: Դերջան գավառում Սիմոն վարդապետը հիմնում է **Խլաձորի Ս. Գրիգոր վանքը**: Նրան հաջորդեցին Պետրոս և Բարսեղ վանահայրերը: Վարդիկ հայրը հիշվում է որպես Վանգո վանքի հիմնադիր՝ ընկերակից ունենալով Կարմիր հորը: Նրանք եկել էին Ծոփաց աշխարհի Պաղնատուն գավառից: Կարինում Սարգիս վարդապետը հիմնում է **Հնձուց վանքը**: Վանքն իր անունը ստացել է մոտակա Հինձք գյուղի անունից և հայտնի է նաև **Ս. Աստվածածնի Կարմիր վանք** անունով: Վասպուրականի Ռշտունյաց գավառում հիմնվում է **Նարեկավանքը**, որին մեծ հռչակ է բերում Խոսրով Անձևացու խնամի Անանիա Նարեկացին: Հիմնադրումից հետո վանքն արագորեն մեծ հռչակ ու համբավ է ձեռք բերում, այնտեղ հավաքվում են նշանավոր երաժիշտներ, գիտնականներ, մատենագիրներ ու վարդապետներ. «Յայսմ ժամանակիս շինեցաւ Նարեկ ի Ռշտունեաց գաւառին նոյն կարգաւորութեամբ, բազմամարդ պաշտաւնապայծառ երգեցողովք եւ գրական գիտողաւք»[119]: Անանիա Նարեկացին եղել է Խոսրով Անձևացու որդիների՝ Հովհաննես և Գրի-

116 **Ասողիկ**, էջ 751:
117 **Վարդան վարդապետ**, էջ 88:
118 Տե՛ս **Ալիշան Ղ.**, Շիրակ, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 20:
119 **Ասողիկ**, էջ 751:

գոր Նարեկացիների ուսուցիչը, նրան աշակերտել է նաև Ուխտանես պատմիչը, որը վանքն անվանում է «աստուածատունկ դրախտ»[120]:

Վանքերի թիվն աճում է նաև Հյուսիսային Հայաստանում, որոնցից Ասողիկը հիշատակում է Ստեփանոս վարդապետի՝ Վայոց ձորում հիմնած **Ցախացքարի վանքը**[121]: Ձորագետ գավառում մեծ հռչակ ձեռք բերեցին **Սանահինի Ս. Ամենափրկիչ** և **Հաղպատի Ս. Նշան** գլխավոր եկեղեցիներով վանքերը, որոնք հոգևոր-մշակութային արդյունավետ գործունեություն ծավալեցին նաև հետագա դարերում և հայտնի էին որպես **«Արեւելեան վարդապետներու խումբին կեդրոն»**[122]: Սանահինի վանքը կառուցվել է 957 թ., իսկ Հաղպատի վանքը 10 տարի անց՝ 967 թ., կառուցել է Աշոտ Գ Ողորմածի կինը՝ Խոսրովանույշ թագուհին[123]: Սանահինի առաջին վանահայրը Հովհաննես վարդապետն էր, իսկ Հաղպատինը՝ Սիմեոն վարդապետը[124]: Երկու վանքերի միաբանների թիվը հասել է շուրջ 500-ի, որոնք էին «հաւասարակեացք, միաբանականք ըստ կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսղի»[125]: Մեծապես ծաղկեց **Տաթևի վանքը**, որին բազմաթիվ գյուղեր և ագարակներ նվիրեցին թագավորներն ու իշխանները[126]:

Անանիա Մոկացու օրոք ծաղկած վանքերում գործում էին բազմաթիվ նշանավոր վարդապետներ, որոնց գործունեության շնորհիվ զգալիորեն զարգացավ հայոց մշակույթը: Այսպես՝ ժամանակագիր Սամուել Անեցին գրում է, որ Անանիա Մոկացին 955 թ. Մոկաց եպիսկոպոս է ձեռնադրում Դավթին, որը «փայլէր իմաստութեամբ եւ սրբութեամբ»[127]: «Հրաշագործ» կոչված այս հոգևորականը Ապարանից վանքի հիմնադիրն էր և հայտնի էր դարձել Կ. Պոլսից բերված Փրկչական խաչի մասունքի շնորհիվ[128]:

---

120 **Ուխտանես եպիսկոպոս**, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածին, 1871, էջ 8:

121 Տե՛ս **Ասողիկ**, էջ 752:

122 **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., էջ 1287:

123 Տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 89-90:

124 Տե՛ս **Ասողիկ**, էջ 755:

125 Նույն տեղում:

126 Տե՛ս **Օրբելյան Ստ.**, էջ 194-200, 213, 215: Տե՛ս նաև **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 70-86:

127 **Սամուէլ Անեցի**, էջ 174:

128 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Եր., ԵՊՀ հրատ., 1944, էջ 33:

Կենտրոնաձիգ պետության կողմնակից հայոց հայրապետը սերտ համագործակցության մեջ էր Անիի Բագրատունի թագավորների հետ, որոնք 10-րդ դարի կեսերից վերստին գերակա դիրք ունեին հայ իշխանական տների նկատմամբ: Թե՛ Աբասը և թե՛ Աշոտ Գ-ն ու նաև վերջինիս կինը՝ Խոսրովանույշ թագուհին, մեծապես աջակցել են Անանիա Մոկացուն, սատարել պետության ու եկեղեցու իշխանությունն ամրապնդող նրա ձեռնարկները: Աշոտ Ողորմածի օրոք ներիշխանական պայքարը համեմատաբար թուլանում է, և բոլորը ճանաչում են Անիի Բագրատունիների գերակայությունը հայ իշխանական հիերարխիայում: Այդ գործում մեծ դերակատարություն է ունեցել Անանիա կաթողիկոսը, որն իր ազդեցությունն ու կարողությունը ծառայեցրել է պետության և թագավորական իշխանության ամրապնդմանը[129]: Հայոց նոր մայրաքաղաքի՝ Անիի նվիրագործման կապակցությամբ «ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց» և դիմեցին Անանիա կաթողիկոսին, որպեսզի նա կատարեր Աշոտ շահնշահի հանդիսավոր օծման արարողությունը[130]: 961 թ. «եղեւ ժողով ահագին մեծ ի քաղաքն Անի, որ եղեւ թագաւորանիստ քաղաք Հայոց»[131]: Այդ արարողությանը մասնակցում էին պատվավոր հյուրեր, որոնց թվում էին Աղվանից Փիլիպպոս թագավորը և Հովհաննես կաթողիկոսը, իսկ ովքեր չէին կարողացել ժամանել, «տուրս եւ սէրս հանդերձ պատուական ընծայիւք յուղարկէին ի փառաւորութիւն Հայոց թագաւորութեան»[132]: Հայոց պատմության այս փուլը (10-րդ դարի 40-70-ական թթ.) Ա. Գրենը բնորոշում է որպես եկեղեցու ազդեցության աճի շրջան[133]:

Արտասովոր կամքի և նախաձեռնողականության տեր անձնավորություն էր Անանիա կաթողիկոսը, որը չէր ընկրկում դժվարությունների և խոչընդոտների առաջ: 22 տարի պաշտոնավարելուց հետո

---

129 Տե՛ս **Garsoyan N.**, նշվ. աշխ., էջ 165, 173:

130 Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1898, էջ 3 (այսուհետ՝ **Մատթէոս Ուռհայեցի**), **Մաթևոսյան Կ.**, Անին և անեցիները, Եր., Մատենադարանի հրատ., 2021, էջ 24, **Մաթևոսյան Ռ.**, Անին արքունի աթոռանիստ և մայրաքաղաք, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1978, N 5, էջ 91-92:

131 **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 4: Ըստ Ադոնցի՝ 961 թ. հանդեսը կազմակերպվել էր արքայական գահը Երազգավորսից Անի տեղափոխելու առիթով (տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 521):

132 **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 4:

133 Տե՛ս **Грень А.**, նշվ. աշխ., էջ 101:

«հասանէ վախճան կաթողիկոսին Հայոց տեառն Անանիայի»[134], և նա ծերունական մահով 965 թ. հրաժեշտ է տալիս երկրային կյանքին: Նրա մարմինն ամփոփվել է Արգինայի վանքում:

Եզրակացություններ

10-րդ դ. հայ եկեղեցու նշանավոր առաջնորդ Անանիա Մոկացու երկարատև պաշտոնավարման ընթացքում հայոց նվիրապետությունը դիմագրավում էր ներքին ու արտաքին տարատեսակ մարտահրավերների, որոնք թիրախավորել էին ազգային-եկեղեցական կառույցները: Անանիա Մոկացին ստանձնում է հոգևոր վեհապետի գահը կաթողիկոսության համար անկումային շրջանում (10-րդ դ. 40-ական թթ.), երբ վտանգված էր հայոց ազգային և հոգևոր միասնությունը: Երկրի հոգևոր և ծիսադավանանքային միասնության վերականգնումը, հանրային համերաշխության հաստատումը երկրի անվտանգության ապահովման գլխավոր երաշխիքներն էին: Ելնելով հայոց պետականության ամրապնդման շահերից՝ հանձնառու եկեղեցապետը լիովին աջակցում էր Բագրատունիների կենտրոնաձիգ քաղաքականությանը, նպաստում երկրում ներքին կայունության հաստատմանը:

Հայոց կաթողիկոսի միավորիչ առաքելությունը լիարժեքորեն իրականացնելու, դավանական ճնշումների դեմ արդյունավետ պայքարելու նպատակով հայոց արքա Աբաս Բագրատունու օժանդակությամբ Անանիա Մոկացին հայրապետական աթոռը 947 թ. Աղթամարից տեղափոխում է Շիրակի Արգինա գյուղաքաղաք: Դուրս գալով Արծրունիների իշխանության տիրույթից, որտեղ ուժեղ էր քաղկեդոնական եկեղեցու ազդեցությունը, վճռական պատրիարքն անհաշտ կեցվածք է որդեգրում նվիրապետական աթոռների անջատողականության և աղանդավորականության նկատմամբ, պայքարում եկեղեցու հնավանդ կարգերը ոտնահարողների դեմ: Նրա եռանդուն և նպատակասլաց գործունեության շնորհիվ կասեցվում են Աղվանքի կաթողիկոսության և Սյունիքի մետրոպոլիտության անջատողական նկրտումները, չեզոքացվում է օտարածին ուժերի կողմից խրախուսվող հակակաթողիկոսական ընդդիմությունը:

134 **Օրբելյան Ստ.**, էջ 211:

Շրջանցելով հայոց եկեղեցուն բնորոշ ներողամտության ու քրիստոնեական հանդուրժողականության սկզբունքները՝ հաստատակամ եկեղեցապետն անզիջում գործելակերպ է որդեգրում Հայաստան ներթափանցած աղանդների և եկեղեցին ներսից քայքայող տարրերի նկատմամբ, որոնք թուլացնում էին ազգային-եկեղեցական կառույցների դիմադրողականությունը: Քաղկեդոնական կայսերականացված եկեղեցու դեմ պայքարում նա դիմում է ոչ սովորական քայլի՝ հրապարակելով օրենք կրկնամկրտության մասին, որով նախատեսվում էր վերստին մկրտել քաղկեդոնական ծեսով մկրտված հայերին:

Ազգային-եկեղեցական շահերի փոխկապակցվածությունը գիտակցող գործունյա հայրապետը խթանում էր նոր վանքերի և եկեղեցիների շինարարությունը, որոնք գրչարվեստի մեջ հմուտ վարդապետական դասով դառնում են միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային բեղուն կենտրոններ:

Վարդան Ա. Ալեքսանյան – հեղինակ է ավելի քան երկու տասնյակ գիտական հոդվածների: Ուսումնասիրությունները վերաբերում են հայ եկեղեցու պատմության հիմնահարցերին ավատատիրության դարաշրջանում:

Էլ. հասցե՝ vardanalexanyan406@gmail.com

Summary

RESTORATION OF THE ARMENIAN CHURCH HIERARCHY UNDER ANANIA MOKATSI (942-965)

Vardan A. Aleksanyan
Candidate of Sciences in History

Key words – Anania Mokatsi, Abas Bagratuni, Ashot III Merciful, Hakob Syunetsi, Syunik, Albania, spiritual security, separatism, Chalcedonian Christianity, relocation of the Catholicos throne, growth in the number of monasteries, ecclesiastical-political struggle.

During the long reign of the famous leader of the 10th century, Anania Mokatsi, the Armenian Church faced various internal and external challenges

directed against the national-church structures. Anania Mokatsi ascends the throne of the spiritual ruler during the period (during the 40s of the 10th century) of the weakening of the Catholicos power, when national and spiritual unity was threatened. The restoration of the spiritual and religious unity of the country, the establishment of social solidarity were the main guarantees of national security. Based on the interests of strengthening the Armenian statehood, the purposeful head of the church fully supports the centralization policy of Bagratuni, contributes to the establishment of internal stability in the country. With the assistance of the Armenian king Abas Bagratuni (929-953), Anania Mokatsi transferred the patriarchal throne from Akhtamar to the village of Argin Shirak in 947. The purpose of moving the spiritual center was the full implementation of the unifying mission of the Catholicos and the conduct of an effective struggle against religious pressures.

Proceeding from the Chalcedonian milieu of the Artsrunids, the energetic patriarch takes an irreconcilable position towards separatism and sectarianism of the canonical thrones, fights against those who neglect the ancient canons of the church. Thanks to his energetic and purposeful activity, the separatist aspirations of the Aluan Catholicosate and the Syunik Metropolis were stopped, the anti-Catholicos opposition encouraged by foreign states is being neutralized.

Bypassing the principles of forgiveness and Christian tolerance characteristic of the Armenian Church, the unshakable head of the church takes an uncompromising position towards foreign sects and elements that have penetrated into Armenia to destroy the church from within. Deeply comprehending of the interconnectedness of national and church interests, the active patriarch encouraged the construction of new monasteries and churches. The latter, with an ecclesiastical academic class skilled in the art of writing, became fruitful spiritual and cultural centers of medieval Armenia.

The literary work of Anania Mokatsi is the set of "letters" written by him, of which only four have survived. These are valuable monuments testifying to the theological knowledge and skills of the learned patriarch.

Հեղինակային գրքույկներ, գիրք 4(Դ), հատոր 3 (83), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2023

Резюме

ВОССТАНОВЛЕНИЕ ИЕРАРХИИ В АРМЯНСКОЙ ЦЕРКВИ ПРИ АНАНИА МОКАЦИ (942-965 гг.)

Вардан А. Алексанян
Канд. ист. наук

Ключевые слова - Ананиа Мокаци, Абас Багратуни, Ашот III Милосердный, Акоб Сюнеци, Сюник, Алуанк, духовная безопасность, сепаратизм, халкидонство, перенесение престола Католикоса, рост числа монастырей, церковнополитическая борьба.

За время длительного правления своего знаменитого предводителя X в. Ананиа Мокаци Армянская церковь противостояла различным внутренним и внешним вызовам, которые были нацелены на ослабление национально-церковной структуры. Ананиа Мокаци вступает на престол духовного владыки в период ослабления католикосской власти (40-е гг. X в.), когда национальное и духовное единство оказалось под угрозой. Восстановление духовного и религиозного единства страны, установление общественной солидарности были главными гарантиями национальной безопасности. Исходя из интересов укрепления армянской государственности, целеустремленный глава церкви всецело поддерживает централизационную политику Багратуни, способствует установлению внутренней стабильности в стране.

При содействии армянского царя Абаса Багратуни (929-953 гг.) Анания Мокаци в 947 г. перенес патриарший престол с острова Ахтамар в село Аргина области Ширак. Целью перенесения духовного центра было осуществление объединяющей миссии католикоса и ведение эффективной борьбы с внешним религиозным давлением.

Будучи выходцем из халкидонитской среды Арцрунидов, решительный патриарх занимает непримиримую позицию по отношению к сепаратизму и сектантству канонических престолов, борется с теми, кто пренебрегает древними канонами церкви. Благодаря его энергичной и целенаправленной деятельности были предотвращены сепаратистские устремления Алуанского католикосата и Сюникской митрополии, нейтрализована антикатоликосская оппозиция, поощряемая иностранными государствами.

Несмотря на характерные для Армянской церкви принципы всепрощения и христианской терпимости, непоколебимый глава церкви занимает бескомп-

ромиссную позицию по отношению к проникшим в Армению иностранным сектам и элементам, разрушающим церковь изнутри. Осознавая глубокую взаимосвязь национальных и церковных интересов, деятельный патриарх поощрял строительство новых монастырей и церквей. Последние с церковным учебным классом, обучением искусству письменности, стали плодотворными духовными и культурными центрами средневековой Армении.

Литературным наследием Ананиа Мокаци является множество написанных им «писем», из которых сохранились только четыре. Это ценные памятники, свидетельствующие об обширных богословских знаниях и навыках ученого патриарха.

REFERENCES

1. "Grigor Magistrosi t'ght'erě", bnagirn aṛajabanov: **K. Kostaneants'i**, Aghek'sandrapōl, tp. Gēorg Sanoyeants'i, 1910, 352 ēj (**In Armenian**).
2. "Hawak'umn patmut'ean Vardanay vardapeti", Venetik, I Surb Ghazar, 1862, 184 ēj (**In Armenian**).
3. "Hay zhoghovrdi patmut'yun", hat. G, Yer., HSSH GA hrat., 1976, 1023 ēj (**In Armenian**).
4. "Hayots' patmut'yun", hat. B. Mijin darer (IV dar-XVII dari aṛajin kes), girk' II (IX dari kes-XVII dari aṛajin kes), Yer., "Zangak" hrat., 2014, 800 ēj (**In Armenian**).
5. "Teaṛn Ananiayi hayots' kat'oghikosi yaghags apstambut'ean tann Aghuanits' vor ěnd zhamanaks leal its'ē dzeṛnadrut'iwnn artak'oy surb Lusavorch'i at'oroyn", "Matenagirk' Hayots'", hat. ZH. ZH dar, Ant'ilias-Libanan, YEPH hrat., 2009, 1158 ēj **(In Armenian**).
6. **Achaṛyan H.**, Hayots' andznanunneri baṛaran, hat. B, Yer., YEPH hrat., 1944, 682 ēj (**In Armenian**).
7. **Adonts' N.**, Yerker, hat. I, Yer., YEPH hrat., 2006, 648 ēj (**In Armenian**).
8. **Akinean N.**, Kiwrion kat'oghikos vrats', Vienna, Mkhitar'ean tparan, 1910, 315 ēj (**In Armenian**).
9. **Akopjan A.**, Albanija Aluank v greko-latinskix i drevnearmjanskix istochnikax, Jer., izd. "Gitutjun" NAN RA, 2022, 303 s. (**In Russian**).
10. **Alek'sanyan V.**, Hakob A yepiskopos Syunets'u gortsuneut'yan shurj (918-958), "Patmabanasirakan handes", Yer., 2014, N 3, ēj 195-209 (**In Armenian**).
11. **Alishan Gh.**, Hayapatum, Patmich'k' yew patmut'iwnk' hayots', mas A, Venetik, S. Ghazar, 1901, 649 ēj (**In Armenian**).
12. **Alishan Gh.**, Shirak, Venetik, S. Ghazar, 1881, 192 ēj (**In Armenian**).
13. **Aṛak'elyan B.**, K'aghak'nerě yev arhestnerě Hayastanum IX-XIII darerum, hat. II, Yer., HSSH GA hrat., 1964, 323 ēj (**In Armenian**).
14. **Ch'amch'yan M.**, Hayots' patmut'yun, hat. B, Yer., YEPH hrat., 1984, 1060 ēj (**In Armenian**).
15. **Galstanyan B.**, Khosrov yepiskopos Andzevats'i, Yer., "Armav" hrat., 2022, 316 ēj (**In Armenian**).
16. **Gren A.**, Dinastija Bagratidov v Armenii, "Zhurnal ministerstva narodnogo prosvesh'enija", SSXS, Tipografija V. Balasheva, S.-Peterburg, 1893, N 11, s. 52-139 (**In Russian**).

17. **Grigoryan G.**, Siwnik‘i vanakan kalvatsatirut‘yunĕ IX-XIII darerum, Yer., HSSH GA hrat., 1973, 267 ēj (**In Armenian**).
18. **Hats‘uni V.**, Karewor khndirner hay yekeghets‘voy patmut‘enēn, Venetik, S. Ghazar, 1927, 574 ēj (**In Armenian**).
19. **K‘yoseyan H.**, Neratsut‘yun hay yekeghets‘akan matenagrut‘yan, Yer., Matenadarani hrat., 2018, 735 ēj **(In Armenian**).
20. **Kirakos Gandzakets‘i**, Patmut‘yun Hayots‘, ashkhatasir: **K. Melik‘-Ōhanjanyani**, Yer., HSSH GA hrat., 1961, 426 ēj (**In Armenian**).
21. **Kogean L.**, Hayots‘ yekeghets‘in, Pēyrut‘, 1961, 776 ēj (**In Armenian**).
22. **Leo**, Yerkeri zhoghovatsu, hat. II, Yer., “Hayastan” hrat., 1967, 786 ēj (**In Armenian**).
23. **Mat‘evosyan K.**, Anin yev anets‘inerĕ, Yer., Matenadarani hrat., 2021, 462 ēj (**In Armenian**).
24. **Mat‘evosyan Ṛ.**, Anin ark‘uni at‘oṛanist yev mayrak‘aghak‘, “Lraber” has. git., Yer., 1978, N 5, ēj 89-94 (**In Armenian**).
25. **Mat‘evosyan Ṛ.**, Bagratunyats‘ Hayastani petakan kaṛuts‘vatsk‘n u varch‘akan kargĕ, Yer., HKHSH hrat., 1990, 294 ēj (**In Armenian**).
26. **Matt‘ēos Uṛhayets‘i**, Zhamanakagrut‘iwn, Vagharshapat, tp. Mayr At‘oṛoj Srboj Ējmiatsni, 1898, 448 ēj (**In Armenian**).
27. **Ōrmanyan M.**, Azgapatum, hat. A, Ējmiatsin, Mayr At‘oṛ Surb Ējmiatsni hrat., 2001, 1870 ēj (**In Armenian**).
28. **Petrosyan Ye.**, Hay yekeghets‘u patmut‘yun, mas A (Skzbits‘ minch‘ev 1441 t‘.), Mayr At‘oṛ Surb Ējmiatsin, “Haghbatavank‘” baregortsakan miut‘yun, 1990, 123 ēj (**In Armenian**).
29. **Samuēl Anets‘i yew sharunakoghner**, Zhamanakagrut‘iwn, ashkhatasirut‘yamb: **K. Mat‘evosyani**, Yer., “Nairi” hrat., 2014, 502 ēj (**In Armenian**).
30. **Sargsyan L.**, Hayastani nviratvakan ardzanagrut‘yunnerĕ IX-XIV darerum, Yer., “Ēdit‘ print”, 2007, 138 ēj (**In Armenian**).
31. **Skabalanovich N.**, Wizantijskoje gosudarstvo i cerkov‘, S. Peterburg, tipografija F. Jeljeonskogo, 1884, 449 s. (**In Russian)**.
32. **Step‘anos Tarawnets‘i Asoghik**, Patmut‘iwn Tiezerakan, “Matenagirk‘ Hayots‘”, hat. ZHYE. ZH dar, Patmagrut‘iwn, girk‘ B, Ant‘ilias-Libanan, YEPH hrat., 2010, 893 ēj (**In Armenian**).
33. **Step‘annosi Siwneats‘ Yepiskoposi** Patmut‘iwn Tann Sisakan, i loys ĕntsayeats‘ Mkrtich‘ Ēmin, Moskva, tparan Lazarean chemarani, 1861, 386 ēj **(**In Armenian**)**.
34. **Ter-Mkrtch‘yan G.**, Hayagitakan usumnasirut‘yunner, girk‘ B, ashkhatasir.` **P. Hakobyani**, Mayr At‘oṛ S. Ējmiatsin, 1998, 816 ēj (**In Armenian**).
35. **Ukhtanes yepiskopos**, Patmut‘iwn hayots‘, Vagharshapat, tp. S. Ējmiatsin, 1871, 141 ēj (**In Armenian**).
36. **Ulubabyan B.**, Hayots‘ arevelits‘ koghmants‘ yekeghets‘in yev mshakuyt‘ĕ, Yer., “Tigran Mets” hrat., 1998, 450 ēj (**In Armenian**).
37. **Ulubabyan B.**, Khach‘eni ishkhanut‘yunĕ X-XIV darerum, Yer., HSSH GA hrat., 1975, 454 ēj (**In Armenian**).
38. **Ut‘mazyan H.**, Syunik‘ĕ IX-X darerum, Yer., YEPH hrat., 1958, 380 ēj (**In Armenian**).
39. **Yeghiazaryan A.**, Abas Bagratuni: T‘agavor hayots‘, Yer., YEPH hrat., 2017, 121 ēj (**In Armenian**).
40. **Yeghiazaryan A.**, Ashot G Voghormats: T‘agavor hayots‘, Yer., YEPH hrat., 2020, 151 ēj (**In Armenian**).
41. **Yeghiazaryan A.**, IX d. verji, X d. aṛajin kesi amenayn hayots‘ kat‘oghikosneri at‘oṛakalut‘yan zhamanakagrut‘yan shurj, “Astvatsabanakan yev kronagitakan hodvatsneri zhoghovatsu”, Yer., YEPH hrat., 2020, N 3, ēj 161-178 (**In Armenian**).